



## **ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՋԴԱԳԻՐ**

**«Ազգային Հիփոթեքային Ընկերություն»  
Վերաֆինանսավորում իրականացնող վարկային  
կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության  
կողմից թողարկվող պարտատոմսերի վերաբերյալ**

**Երևան 2014**

**«Ազգային Հիփոթեքային Ընկերություն»**  
Թողարկողի ֆիրմային անվանումը  
**Վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն**  
**փակ բաժնետիրական ընկերություն**  
Կազմակերպա-իրավական ձևը

0010, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Հանրապետության 22-7/1,  
հեռ. (+374 10) 56 07 41,  
էլ. փոստ՝ [info@nmc.am](mailto:info@nmc.am),  
ինտերնետային կայք՝ [www.nmc.am](http://www.nmc.am)

<b>Արժեթղթերի տեսակը՝</b>	անվանական, արժեկտրոնային պարտատոմս
<b>Արժեթղթերի ձևը՝</b>	ոչ փաստաթղթային
<b>Արժեթղթերի քանակը՝</b>	10,000 (տաս հազար) հատ
<b>Արժեթղթերի անվանական արժեքը՝</b>	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
<b>Արժեթղթերի թողարկման ծավալը՝</b>	1,000,000,000 (մեկ միլիարդ) ՀՀ դրամ
<b>Արժեկտրոնը՝</b>	10%
<b>Շրջանառության ժամկետը՝</b>	3 տարի
<b>Տեղաբաշխման ձևը՝</b>	Երաշխավորված

**«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»**  
Տեղաբաշխողի անվանումը  
**Փակ բաժնետիրական ընկերություն**  
Կազմակերպա-իրավական ձևը

0010 Հայաստանի հանրապետություն, ք. Երևան, Վ. Սարգսյան 10,  
հեռ. (37410) 540782, 540728,  
էլ. Փոստ՝ [info@armswissbank.am](mailto:info@armswissbank.am)  
Ինտերնետային կայք՝ [www.armswissbank.am](http://www.armswissbank.am)

**«ՀՀ կենտրոնական բանկի կողմից ազդագրի գրանցումը չի հավաստում ներդրման ապահովությունը, ներկայացված տեղեկատվության ճշտությունը կամ իսկությունը»:**

**ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ**

Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի բովանդակությունը:

Ստորագրող անձինք

Արթուր Զավադյան

«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ խորհրդի նախագահ



Օլեգ Ադասյան

«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ խորհրդի անդամ



Անդրանիկ Գրիգորյան

«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ խորհրդի անդամ



Միեր Եղիզարյան

«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ  
Գործադիր տնօրեն




Քրիստինա Քարամյան

«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ  
Գլխավոր հաշվապահ



Գևորգ Մաչանյան

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ  
Գործադիր տնօրեն



# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

I	<b>ԱՄՓՈՓԱԹԵՐԹ</b>	
	<b>ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ և ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ</b>	
1.1	Տեղեկատվություն Կազմակերպության և Կազմակերպության գործունեության վերաբերյալ	5
1.2	Կազմակերպությանն և պարտատոմսերին առնչվող ռիսկեր	8
1.3	Կազմակերպության գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխություններ	9
1.4	Կազմակերպության աուդիտ իրականացնող անձ	9
1.5	Կազմակերպության կառավարման մարմինների կազմի վերաբերյալ համառոտ տեղեկատվություն	10
1.6	Կազմակերպության թողարկած արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ	10
1.7	Կազմակերպության պարտատոմսերի հիմնական տվյալները	14
1.8	Կազմակերպության ամփոփ ֆինանսական տվյալները	14
	<b>ԲԱԺԻՆ 2. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	
2.1	Ռիսկային գործոններ	20
2.2	Հիմնական տեղեկատվություն	22
2.3	Առաջարկի համակողմանի նկարագիրը	22
2.4	Առաջարկի ժամկետները և պայմանները	29
2.5	Առևտրի թույլտվությունը և առևտրի կազմակերպումը	31
	<b>ԲԱԺԻՆ 3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	
3.1	Անկախ աուդիտորները	32
3.2	Ռիսկային գործոններ	32
3.3	Տեղեկատվություն Կազմակերպության մասին	34
3.4	Բիզնեսի նկարագիրը	36
3.5	Կազմակերպության կառուցվածքը	42
3.6	Կազմակերպության հիմնական միջոցները	43
3.7	Կազմակերպության զարգացման վերջին միտումները	43
3.8	Կազմակերպության շահույթի կանխատեսումը	44
3.9	Կազմակերպության կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները	46
3.10	Կազմակերպության կառավարման մարմինների գործունեությունը	51
3.11	Կազմակերպության գլխավոր հաշվապահը	52
3.12	Հսկող անձինք	52
3.13	Տեղեկատվություն Կազմակերպության ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին	52
3.14	Լրացուցիչ տեղեկատվություն	53
3.15	Էական պայմանագրեր	54
3.16	Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվություն	54
3.17	Այլ տեղեկատվություն	54
3.18	«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ տնտեսական գործունեության նկարագրությունը և պլանավորված տնտեսական արդյունքներն ընթացիկ և հաջորդող երկու տարիների համար	54
	<b>Հաշվետվություններ</b>	<b>63</b>

# Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

Ամփոփաթերթը հանդիսանում է «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Կազմակերպություն) և վերջինիս կողմից թողարկվող պարտատոմսերի համառոտ նկարագրություն, հետևաբար առաջարկվող արժեթղթերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական փաստաթղթի վրա:

Ներդրողը կարող է ձեռք բերել սույն փաստաթուղթը և դրան կից ներկայացվող փաստաթղթերը փաստաթղթային տարբերակով Կազմակերպության և/կամ «ԱՐՄՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Տեղաբաշխող) գրասենյակներում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ վերջիններիս ինտերնետային կայքերում՝ [www.nmc.am](http://www.nmc.am), [www.armswissbank.am](http://www.armswissbank.am):

## 1 ԲԱԺԻՆ. ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՂԱՐԿՎԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

### 1.1 Տեղեկատվություն Կազմակերպության և Կազմակերպության գործունեության վերաբերյալ

#### **Կազմակերպության լրիվ ֆիրմային անվանումն է**

**հայերեն՝** «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն:

**ռուսերեն՝** «Национальная Ипотечная Компания» Рефинансирующая кредитная организация Закрытое Акционерное Общество.

**անգլերեն՝** <National Mortgage Company> Refinancing Credit Organisation Closed Joint Stock Company.

#### **Կազմակերպության կրճատ ֆիրմային անվանումն է**

**հայերեն՝** «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ

**ռուսերեն՝** «Национальная Ипотечная Компания» РКО ЗАО

**անգլերեն՝** <National Mortgage Company> RCO CJSC

#### **Կազմակերպության պետական գրանցման վայրն է՝**

ՀՀ, ք. Երևան, Հանրապետության 22, 7/1:

Կազմակերպության պետական գրանցման համարն է 26:

#### **Կազմակերպության գտնվելու վայրն է՝**

ՀՀ, ք. Երևան, Հանրապետության 22, 7/1

#### **Կապի միջոցները՝**

հեռ. 56-07-41, 56-09-71

ֆաքս 56-07-41

էլ. փոստ [info@nmc.am](mailto:info@nmc.am),

ինտերնետային կայք՝ [www.nmc.am](http://www.nmc.am):

Կազմակերպության հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:

Պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են կապնվել Կազմակերպության մասնագետների հետ հետևյալ հեռախոսահամարով՝ /37410/ 56-07-41:

Կազմակերպությունը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում 2009թ. հունիսի 3-ին որպես ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն: ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ նաև ՀՀ ԿԲ) խորհրդի 2009թ. հունիսի 16-ի թիվ 182Ա որոշմամբ Կազմակերպությունը գրանցվել է և ստացել թիվ 86 գրանցման վկայական: 2011թ. հոկտեմբերին Կազմակերպությունը փոխել է տեսակը՝ ունիվերսալ վարկային կազմակերպությունից վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպության, ինչը առավել ճշգրիտ է բնորոշում Կազմակերպության գործունեության բնույթը:

Կազմակերպությունը ստեղծվել է ՀՀ հիփոթեքային շուկայի զարգացմանն օժանդակելու նպատակով, որն իրականացվում է բանկերին և վարկային կազմակերպություններին երկարաժամկետ միջոցների տրամադրմամբ՝ վերջիններիս կողմից ֆիզիկական անձանց տրամադրված հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման միջոցով:

**Կազմակերպության առաքելությունն է** Հայաստանի հիփոթեքային շուկան դարձնել իրացվելի, կայուն և հասանելի:

**Կազմակերպության նպատակներն են** 1. հիփոթեքային շուկայում ստեղծել այնպիսի պայմաններ, որպեսզի վարկերը հասանելի լինեն բոլոր այն ընտանիքների համար, ովքեր ունեն միջին եկամուտ և հիփոթեքային վարկավորման միջոցով կարող են բարելավել իրենց բնակարանային պայմանները, 2. Աջակցել ՀՀ կապիտալի շուկայի զարգամանը:

Գործելով երկրորդային շուկայում՝ Կազմակերպությունը անմիջապես չի աշխատում հաճախորդների հետ, այլ համագործակցում է բանկերի և վարկային կազմակերպությունների հետ՝ տրամադրելով նրանց մատչելի պայմաններով երկարաժամկետ վարկեր: Կազմակերպության կողմից տրամադրված միջոցների հաշվին համագործակցող Ընկերությունները ՀՀ քաղաքացիներին առաջարկում են հիփոթեքային վարկեր՝ բնակարանային կարիքները բարելավելու նպատակով:

**Կազմակերպության հեռանկարային նպատակն է** համակցել բնակարանային վերաֆինանսավորումը և կապիտալի շուկան՝ հիփոթեքային արժեթղթերի միջոցով, ինչը կաջակցի Կազմակերպության նպատակներին ու առաքելությանը:

Կազմակերպության կանոնադրական կապիտալը կազմում է 9,202,500,000 ՀՀ դրամ, որը բաժանված է 900,000 հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսի, յուրաքանչյուրը 10,225 ՀՀ դրամ անվանական արժեքով:

Կազմակերպության միակ հիմնադիր է հանդիսանում ՀՀ ԿԲ-ն:

### ***Բիզնեսի համառոտ նկարագիրը***

Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է իրականացնել վերաֆինանսավորող վարկային կազմակերպությանը բնորոշ բոլոր ֆինանսական գործառնությունները կամ դրանց մի մասը:

Կազմակերպությունը գործունեությունը սկսելուց ի վեր իր բնույթով հանդիսանում է վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն: Մասնավորապես, որպես իրացվելիության երկրորդային շուկայի օպերատոր, ֆիզիկական անձանց չի տրամադրում հիփոթեքային վարկեր, այլ համագործակցում է ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների հետ, (այսուհետ՝ Գործընկեր ֆինանսական հաստատություն կամ ԳՖՀ), վերաֆինանսավորելով վերջիններիս կողմից տրամադրված հիփոթեքային վարկերը: Ներկայումս Կազմակերպությունը համագործակցում է 20 ԳՖՀ՝ 15 առևտրային բանկ և 5 վարկային կազմակերպություն հետ:

Հիփոթեքային վարկավորման գործընթացը ստանդարտացնելու նպատակով և ռիսկայնությունը նվազեցնելու նպատակով Կազմակերպությունը վերաֆինանսավորում է այն հիփոթեքային վարկերը, որոնք համապատասխանում են իր կողմից սահմանված պահանջներին: Կազմակերպությունը վերաֆինանսավորումն իրականացնում է ինչպես սեփական կապիտալի, այնպես և ներգրավված միջոցների հաշվին: Իր առաքելության շրջանակներում Կազմակերպությունը մասնակցում է ՀՀ հիփոթեքային շուկայում իրականացվող տարբեր ծրագրերին: Մասնավորապես, ՀՀ կառավարությունից ներգրավված միջոցների հաշվին Կազմակերպությունը մասնակցել է ՀՀ հիփոթեքային վարկերի շուկայի վարկավորման ծրագրի իրականացմանը, իսկ 2011թ. հուլիս ամսից մասնակցում է նաև Գերմանական KFW Entwicklungsbank բանկի կողմից ֆինանսավորվող «Հայաստանում բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացում – երրորդ փուլ» վարկային ծրագրի իրականացմանը: 2013թ. հունիսից Կազմակերպությունը օգտագործում է «Հայաստանում բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացում» առաջին և երկրորդ փուլերի միջոցները:


2013թ. դեկտեմբերի 17-ին Ընկերությունը 10 մլն եվրո վարկային գծի պայմանագիր ստորագրեց Ֆրանսիական զարգացման գործակալության հետ՝ բնակարանային էներգոարդյունավետության բարձրացման և միկրովարկերի ֆինանսավորման ծրագրի իրականացման նպատակով:

Իր գործունեությունը ֆինանսավորելու համար լրացուցիչ միջոցներ ներգրավելու և կապիտալի շուկայի զարգացմանը աջակցելու նպատակով Կազմակերպությունը սկսած 2011թ. նոյեմբեր ամսից թողարկում է պարտատոմսեր: Ընդհանուր առմամբ Կազմակերպությունը իրականացրել է թվով 9 տեղաբաշխում՝ ներգրավելով մոտ 8 մլրդ ՀՀ դրամ: Ընդ որում, Կազմակերպությունը պարտատոմսերի տեղաբաշխումը իրականացրել է ոչ թե բաժանորդագրության, այլ աճուրդի միջոցով (Պարտատոմսերը ամբողջությամբ տեղաբաշխվել են «Նասդաք Օէմեքս Արմենիա» ԲԲԸ (Բորսա) տեղաբաշխման համակարգով):

2013 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության կողմից վերաֆինանսավորվել է ընդհանուր առմամբ 4,224 վարկ 33.6 միլիարդ ՀՀ դրամ ծավալով: Վերաֆինանսավորված վարկերի ընդհանուր ծավալի մոտ 77.8% կազմել են ձեռք բերման

վարկերը, իսկ 20.3%՝ վերանորոգման վարկերը<sup>1</sup>: Ըստ աշխարհագրական բաշխվածության վերաֆինանսավորված վարկերի մեծ մասը (ընդհանուր ծավալի մոտ 76%) տրամադրված է եղել Երևան քաղաքում:

Կազմակերպության ներքին վարչակազմակերպական կառուցվածքը հետևյալն է.



Կազմակերպությունը ներկայումս մասնաճյուղեր և ներկայացուցչություններ չունի և չի հանդիսանում որևէ խմբի անդամ:

## 1.2 Կազմակերպությանն և պարտավորումներին առնչվող ռիսկեր

Ինչպես բոլոր տնտեսվարող սուբյեկտները, Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում բախվում է տարբեր ռիսկային գործոնների հետ: Ներդրողները մինչև պարտատոմսերում ներդրում կատարելու մասին որոշում ընդունելը պետք է տեղյակ լինեն այդ ներդրման հետ կապված ռիսկերի մասին:

Ընդհանուր առմամբ, պարտատոմսերում ներդրում կատարողները բախվում են ինչպես թողարկող կազմակերպության (այսուհետ՝ Թողարկող) գործունեության հետ կապված, այնպես էլ ֆինանսական շուկայում տիրող իրավիճակից առաջացող ռիսկերի (շուկայական ռիսկ) և պարտատոմսերի իրացվելիության ռիսկի հետ:

<sup>1</sup> Վերաֆինանսավորված վարկերի մնացած մասը կազմել են կառուցապատման և վերաֆինանսավորման վարկերը:



Թողարկողի ռիսկը կապված է վերջինիս ֆինանսատնտեսական գործունեության առանձնահատկությունների հետ: Այս առումով, Կազմակերպության համար առավել էական ռիսկերն են.

- Գործընկերների կամ վարկային ռիսկը, ինչի էությունը կայանում է նրանում, որ գործընկերները չեն կատարի Կազմակերպության նկատմամբ ստանձնած իրենց վարկային պարտավորությունները,
- Կազմակերպության իրացվելիության ռիսկը, երբ Կազմակերպության ազատ դրամական միջոցները բավարար չեն ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու համար,
- Ընդհանուր տնտեսության ռիսկերը, երբ ՀՀ մակրոտնտեսական իրավիճակը և հիփոթեքային շուկայի փոփոխությունները կարող են բացասաբար ազդել Կազմակերպության գործունեության, մասնավորապես վարկավորման ծավալների վրա,
- Օրենսդրական ռիսկը, երբ օրենսդրական դաշտի փոփոխությունները կարող են բացասաբար ազդել Կազմակերպության գործունեության վրա, և
- Գործառնական ռիսկը, ինչը կարող է ի հայտ գալ ինչպես Կազմակերպության կողմից օգտագործվող տեխնիկական միջոցների խափանման, այնպես և մարդկային գործոնի պատճառով:

Կազմակերպության կարծիքով շուկայական առավել կարևոր ռիսկեր են հանդիսանում.

**Տոկոսադրույքների փոփոխման ռիսկ**՝ տոկոսադրույքների փոփոխման ռիսկը կարող է ազդել պարտատոմսերի գրավչության վրա: Մասնավորապես, շուկայում տոկոսադրույքների բարձրացման դեպքում, պարտատոմսի գինը նվազում է, ինչի արդյունքում ներդրողը կարող է չստանալ նախատեսվող շահույթը, կամ անգամ վնասներ կրել:

**Արտարժույթի ռիսկ**՝ արտարժույթի ռիսկը առաջանում է ազգային դրամի փոխարժեքի տատանումների պատճառով և կարող է բացասաբար ազդեցություն ունենալ ներդրողի պարտատոմսերից ստացված եկամուտների վրա

**Պարտավորումների իրացվելիության ռիսկ**՝ պարտատոմսերի շուկայի զարգացվածության ցածր մակարդակի պայմաններում կարող է ստեղծվել այնպիսի իրավիճակ, երբ պարտատոմսի սեփականատերը ցանկացած պահի պարտատոմսերը վաճառելու հետ կապված դժվարությունների կբախվի:

### **1.3 Կազմակերպության գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխություններ**

Կազմակերպության գործունեությունը մշտապես գտնվում է Կազմակերպության խորհրդի և Կազմակերպության գործադիր մարմնի ուշադրության ներքո, որոնք օպերատիվ արձագանքում են շուկայական իրավիճակի փոփոխություններին՝ համապատասխանեցնելով Կազմակերպության գործունեությունը շուկայի պահանջներին, ինչպես նաև նվազեցնելով տարբեր ռիսկային գործոնների բացասական ազդեցությունը:

2013թ. ընթացքում Կազմակերպության գործունեության և ֆինանսական վիճակի էական փոփոխություն տեղի չի ունեցել: Գործունեության համար անհրաժեշտ բոլոր արտոնագրերը և լիցենզիաները ուժի մեջ են, Կազմակերպության դեմ դատական հայցեր առկա չեն, բացակայում են և չեն սպասվում կազմակերպական փոփոխություններ:

Ընկերության փաստացի համալրված կանոնադրական կապիտալը կազմում է 9,202,500,000 (ինը միլիարդ երկու հարյուր երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

### **1.4 Կազմակերպության աուդիտ իրականացնող անձ**

Կազմակերպության 2010, 2011 և 2012 թվականների անկախ աուդիտորական ստուգումն

իրականացվել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ աուդիտորական կազմակերպության կողմից: Վերջինս 2013թ. սեպտեմբերի 26-ին կայացած բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընտրվել է որպես Կազմակերպության 2013թ. գործունեության աուդիտն իրականացնող աուդիտորական կազմակերպություն: «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն հանդիսանում է «Գրանթ Թորնթոն Ինտերնեյշնալի» անդամ:

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի հասցեն է՝ ՀՀ ք. Երևան 0012, Վաղարշյան 8/1 հեռ.՝ +374 10 26-09-54, ինտերնետային կայքի հասցեն է՝ www.gta.am: Կազմակերպության տնօրեն-բաժնետեր է հանդիսանում Գագիկ Գյուլբուդադյանը:

Աուդիտի նպատակն է ձեռք բերել բավարար երաշխիքներ՝ համոզվելու համար, որ ֆինանսական հաշվետվությունները գերծ են էական անճշտություններից: «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի եզրակացությունները ներկայացված են կից Հավելվածներում: Նախորդող վերջին 3 տարվա ընթացքում Կազմակերպության աուդիտն իրականացրած անձի կողմից աշխատանքից հրաժարման դեպք չի եղել:

**1.5 Կազմակերպության կառավարման մարմինների կազմի վերաբերյալ համառոտ տեղեկատվություն**

Կազմակերպության կանոնադրությունով սահմանված են Կազմակերպության կառավարման հետևյալ մարմինները՝

- Բաժնետերերի ընդհանուր ժողովը (միակ բաժնետերը), այսուհետ նաև ժողով,
- Խորհուրդ,
- Գործադիր տնօրեն:

Կազմակերպության խորհուրդը բաղկացած է երեք անդամից.

Հ/հ	Անուն Ազգանուն	Պաշտոն
1	Արթուր Զավադյան	Խորհրդի նախագահ
2	Օլեգ Աղասյան	Խորհրդի անդամ
3	Անդրանիկ Գրիգորյան	Խորհրդի անդամ

Թողարկողի կառավարմանը մասնակցող անձինք են՝ գործադիր տնօրեն՝ Միեր Եղիգարյանը, գործադիր տնօրենի տեղակալ՝ Լիլիթ Եղիգարյանը, գլխավոր հաշվապահ՝ Քրիստինա Քարամյանը և վերստուգիչ՝ Էդգար Էվոյանը:

Կազմակերպության աշխատակիցների թիվը 31.12.2013թ.-ի դրությամբ կազմում է 15 աշխատակից:

**1.6 Կազմակերպության թողարկած արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ**

Կազմակերպությունը մինչ այժմ թողարկել է ինչպես բաժնետոմսեր, այնպես և պարտատոմսեր: Կազմակերպության հիմնադրման պահին 2009թ. հունիսի 16-ին Կազմակերպության կանոնադրական կապիտալը կազմել է 5,000,000,000 ՀՀ դրամ, որը բաժանված է եղել 500,000 բաժնետոմսի, ընդ որում մեկ բաժնեմասի անվանական արժեքը կազմել է 10,000 ՀՀ դրամ: Գործունեության ընթացքում Կազմակերպության կանոնադրական կապիտալը համալրվել է և ներկայումս կազմում է 9,202,500,000 ՀՀ դրամ, որը բաժանված է 900,000 բաժնետոմսի, մեկ բաժնեմասի անվանական արժեքը կազմում է 10,225 ՀՀ դրամ: Կազմակերպության կանոնադրական կապիտալի բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և պատկանում են Կազմակերպության միակ բաժնետիրոջը՝ ՀՀ ԿԲ-ին:

Հաշվի առնելով Կազմակերպության կազմակերպարավական ձևը՝ Կազմակերպության

կողմից թողարկված բաժնետոմսերը չեն շրջանառվում կարգավորող շուկայում: Կազմակերպության բաժնետոմսերը թողարկված են անժամկետ:

2011-2013թթ. ընթացքում Կազմակերպությունը իրականացրել է պարտատոմսերի ինը թողարկում, յոթը՝ 1,000,000,000 ՀՀ դրամ անվանական ծավալով, երկուսը՝ 500,000,000 ՀՀ դրամ անվանական ծավալով: Թողարկված պարտատոմսերի պայմանները ներկայացված են ստորև.

*Առաջին թողարկում*

Պարտատոմսերի տեսակը	Անվանական, գեղջատոկոսային պարտատոմս
Անվանական արժեքը, արժույթը	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
Քանակը	10 000 հատ
Տեղաբաշխման (աճուրդի անցկացման) ամսաթիվը	24.11.2011
Մարման ամսաթիվը	24.05.2012

Պարտատոմսերը ամբողջությամբ տեղաբաշխվել են «Նասդաք Օէմեքս Արմենիա» ԲԲԸ (Բորսա) տեղաբաշխման համակարգով, ստանդարտ, փակ, (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով: Տեղաբաշխման արդյունքում ձևավորված միջին եկամտաբերություն կազմել է 9.3806% տարեկան: Պարտատոմսերն ամբողջությամբ մարվել են թողարկման որոշմամբ սահմանված օրն, այն է 2012թ. մայիսի 24-ին:

*Երկրորդ թողարկում*

Պարտատոմսերի տեսակը	Անվանական, գեղջատոկոսային պարտատոմս
Անվանական արժեքը, արժույթը	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
Քանակը	10 000 հատ
Տեղաբաշխման (աճուրդի անցկացման) ամսաթիվը	07.06.2012
Մարման ամսաթիվը	07.12.2012

Պարտատոմսերը ամբողջությամբ տեղաբաշխվել են «Նասդաք Օէմեքս Արմենիա» ԲԲԸ (Բորսա) տեղաբաշխման համակարգով, ստանդարտ, փակ, (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով: Տեղաբաշխման արդյունքում ձևավորված միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 8.8408% տարեկան: Պարտատոմսերն ամբողջությամբ մարվել են թողարկման որոշմամբ սահմանված օրն, այն է 2012թ. դեկտեմբերի 7-ին:

*Երրորդ թողարկում*

Պարտատոմսերի տեսակը	Անվանական, գեղջատոկոսային պարտատոմս
Անվանական արժեքը, արժույթը	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
Քանակը	5 000 հատ
Տեղաբաշխման (աճուրդի անցկացման) ամսաթիվը	25.09.2012
Մարման ամսաթիվը	25.03.2013

Պարտատոմսերը ամբողջությամբ տեղաբաշխվել են «Նասդաք Օէմեքս Արմենիա» ԲԲԸ

(Բորսա) տեղաբաշխման համակարգով, ստանդարտ, փակ, (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով: Տեղաբաշխման արդյունքում ձևավորված միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 9.5533% տարեկան: Պարտատոմսերն ամբողջությամբ մարվել են թողարկման որոշմամբ սահմանված օրն, այն է 2013թ. մարտի 25-ին:

*Չորրորդ թողարկում*

Պարտատոմսերի տեսակը	Անվանական, գեղջատոկոսային պարտատոմս
Անվանական արժեքը, արժույթը	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
Քանակը	10 000 հատ
Տեղաբաշխման (աճուրդի անցկացման) ամսաթիվը	14.12.2012
Մարման ամսաթիվը	14.06.2013

Պարտատոմսերը ամբողջությամբ տեղաբաշխվել են «Նասդաք Օէմեքս Արմենիա» ԲԲԸ (Բորսա) տեղաբաշխման համակարգով, ստանդարտ, փակ, (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով: Տեղաբաշխման արդյունքում ձևավորված միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 10.7562% տարեկան: Պարտատոմսերն ամբողջությամբ մարվել են թողարկման որոշմամբ սահմանված օրն, այն է 2013թ. հունիսի 14-ին:

*Հինգերորդ թողարկում*

Պարտատոմսերի տեսակը	Անվանական, գեղջատոկոսային պարտատոմս
Անվանական արժեքը, արժույթը	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
Քանակը	10 000 հատ
Տեղաբաշխման (աճուրդի անցկացման) ամսաթիվը	17.04.2013
Մարման ամսաթիվը	17.10.2013

Պարտատոմսերը ամբողջությամբ տեղաբաշխվել են «Նասդաք Օէմեքս Արմենիա» ԲԲԸ (Բորսա) տեղաբաշխման համակարգով, ստանդարտ, փակ, (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով: Տեղաբաշխման արդյունքում ձևավորված միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 9.3647% տարեկան: Պարտատոմսերն ամբողջությամբ մարվել են թողարկման որոշմամբ սահմանված օրն, այն է 2013թ. հոկտեմբերի 17-ին:

*Վեցերորդ թողարկում*

Պարտատոմսերի տեսակը	Անվանական, գեղջատոկոսային պարտատոմս
Անվանական արժեքը, արժույթը	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
Քանակը	10 000 հատ
Տեղաբաշխման (աճուրդի անցկացման) ամսաթիվը	25.07.2013
Մարման ամսաթիվը	27.01.2014

Տեղաբաշխված պարտատոմսերի ծավալը կազմել է 816 955 226.38 ՀՀ դրամ գումար: Տեղաբաշխվումը իրականացվել է «Նասդաք Օէմեքս Արմենիա» ԲԲԸ (Բորսա) տեղաբաշխման համակարգով, ստանդարտ, փակ, (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով: Տեղաբաշխման արդյունքում ձևավորված միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 9.4635% տարեկան: Պարտատոմսերն ամբողջությամբ մարվել են թողարկման որոշմամբ

սահմանված օրն, այն է 2014թ. հունվարի 27-ին:

*Յոթերորդ թողարկում*

Պարտատոմսերի տեսակը	Անվանական, գեղջատոկոսային պարտատոմս
Անվանական արժեքը, արժույթը	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
Քանակը	10 000 հատ
Տեղաբաշխման (աճուրդի անցկացման) ամսաթիվը	24.10.2013
Մարման ամսաթիվը	22.10.2014

Պարտատոմսերը ամբողջությամբ տեղաբաշխվել են «Նասդաք Օէմեքս Արմենիա» ԲԲԸ (Բորսա) տեղաբաշխման համակարգով, ստանդարտ, փակ, (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով: Տեղաբաշխման արդյունքում ձևավորված միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 9.5491% տարեկան: Պարտատոմսերի գտնվում են շրջանառության մեջ և թույլատրված են առևտրի կարգավորվող շուկայում:

*Ութերորդ թողարկում*

Պարտատոմսերի տեսակը	Անվանական, գեղջատոկոսային պարտատոմս
Անվանական արժեքը, արժույթը	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
Քանակը	5 000 հատ
Տեղաբաշխման (աճուրդի անցկացման) ամսաթիվը	11.12.2013
Մարման ամսաթիվը	11.06.2014

Պարտատոմսերը ամբողջությամբ տեղաբաշխվել են «Նասդաք Օէմեքս Արմենիա» ԲԲԸ (Բորսա) տեղաբաշխման համակարգով, ստանդարտ, փակ, (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով: Տեղաբաշխման արդյունքում ձևավորված միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 8.5797% տարեկան: Պարտատոմսերի գտնվում են շրջանառության մեջ և թույլատրված են առևտրի կարգավորվող շուկայում:

*Իններորդ թողարկում*

Պարտատոմսերի տեսակը	Անվանական, գեղջատոկոսային պարտատոմս
Անվանական արժեքը, արժույթը	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
Քանակը	10 000 հատ
Տեղաբաշխման (աճուրդի անցկացման) ամսաթիվը	05.02.2014
Մարման ամսաթիվը	29.01.2015

Պարտատոմսերը տեղաբաշխվել են «Նասդաք Օէմեքս Արմենիա» ԲԲԸ (Բորսա) տեղաբաշխման համակարգով, ստանդարտ, փակ, (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով: Ընկերության՝ 1,000,000,000 ՀՀ դրամ ընդհանուր ծավալով թողարկված պարտատոմսերի նկատմամբ ներկայացված պահանջարկի ընդհանուր ծավալը անվանական արժեքով կազմել է 1,005,000,000 ՀՀ դրամ, իսկ գումարային՝ 924,419,680 ՀՀ դրամ, որից Ընկերության կողմից բավարարված ծավալն անվանական արժեքով կազմել է 805,000,000 ՀՀ դրամ, իսկ գումարային արժեքով՝ 741,058,200 ՀՀ դրամ:

Տեղաբաշխված պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 8.6766%, իսկ սահմանային (կտրման) եկամտաբերությունը՝ 8.8013%: Պարտատոմսերը գտնվում են շրջանառության մեջ և թույլատրված են առևտրի կարգավորվող շուկայում:

### **1.7 Կազմակերպության՝ առաջարկվող պարտատոմսերի հիմնական տվյալները**

- 1.7.1 Պարտատոմսերի տեսակը՝ անվանական արժեկտրոնային,
- 1.7.2 Արժեկտրոնի վճարման պարբերականությունը՝ կիսամյակային
- 1.7.3 Պարտատոմսերի ձևը՝ ոչ փաստաթղթային,
- 1.7.4 Պարտատոմսերի փոխարկելիությունը՝ ոչ փոխարկելի,
- 1.7.5 Պարտատոմսերի թողարկման ծավալը՝ 1,000,000,000.00 (մեկ միլիարդ) ՀՀ դրամ,
- 1.7.6 Պարտատոմսերի քանակը՝ 10,000.00 (տաս հազար) հատ,
- 1.7.7 Մեկ պարտատոմսի անվանական արժեքը 100,000.00 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ,
- 1.7.8 Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման օրը՝ 2014թ. ապրիլի 23,
- 1.7.9 Տեղաբաշխման օրվանից առնվազն 3 աշխատանքային օր առաջ Կազմակերպությունն այդ մասին տեղեկությունը հրապարակելու է իր պաշտոնական կայքում,
- 1.7.10 Պարտատոմսերի շրջանառության ժամկետը՝ 3 (երեք) տարի,
- 1.7.11 Պարտատոմսերի շրջանառության ձևը՝ ազատ շրջանառության իրավունքով,
- 1.7.12 Պարտատոմսերի ապահովվածությունը՝ ապահովված են Կազմակերպության կողմից իր գործընկեր ֆինանսական հաստատություններին տրամադրված վարկերից բխող պահանջի իրավունքի գրավով:
- 1.7.13 Կազմակերպության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցներն ուղղվելու են բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ֆիզիկական անձանց տրամադրված հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորմանը:

### **1.8 Կազմակերպության ամփոփ ֆինանսական տվյալները**

Ստորև ներկայացվում են կազմակերպության 06.2009-12.2013թթ. ֆինանսական հաշվետվությունները.

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

*Հազար դրամ*

Անվանումը	01.01.2013- 31.12.2013թթ.	01.01.2012- 31.12.2012թթ.	01.10.2011- 31.12.2011թթ.	01.01.2010- 31.12.2010թթ.	16.06.2009- 31.12.2009թթ.
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	2,262,078	1,599,876	934,126	640,467	85,165
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(1,381,909)	(886,668)	(391,545)	(282,857)	(9,650)
<b>Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտներ</b>	<b>880,169</b>	<b>713,208</b>	<b>542,581</b>	<b>357,610</b>	<b>75,515</b>
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(73)	(59)	(14)	(37)	(115)
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ					
<b>Զուտ կոմիսիոն ծախսեր</b>	<b>(73)</b>	<b>(59)</b>	<b>(14)</b>	<b>(37)</b>	<b>(115)</b>
Այլ եկամուտներ	1		523	104	2,001
Անձնակազմի գծով ծախսեր	(95,419)	(89,386)	(73,501)	(51,425)	(18,666)
Հիմնական միջոցների մաշվածություն	(4,980)	(4,491)	(2,464)	(1,092)	(134)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	(2,652)	(1,772)	(1,186)	(633)	(188)
Այլ ծախսեր	(53,055)	(44,824)	(32,920)	(18,797)	(5,128)
<b>Շահույթ մինչև հարկում</b>	<b>723,991</b>	<b>572,676</b>	<b>433,019</b>	<b>285,730</b>	<b>53,285</b>
Շահութահարկի գծով ծախս	(145,859)	(115,173)	(87,377)	(57,584)	(11,050)
<b>Ժամանակաշրջանի շահույթ</b>	<b>578,132</b>	<b>457,503</b>	<b>345,642</b>	<b>228,146</b>	<b>42,235</b>
Այլ համապարփակ եկամուտ					
<b>Ընդամենը ժամանակաշրջանի համապարփակ եկամուտ</b>	<b>578,132</b>	<b>457,503</b>	<b>345,642</b>	<b>228,146</b>	<b>42,235</b>

**ԱՄՓՈՓ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ**

*Հազար դրամ*

Անվանումը	31.12.2013թ.	31.12.2012թ.	31.12.2011թ.	31.12.2010թ.	31.12.2009թ.
<b>ԱԿՏԻՎՆԵՐ</b>					
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	1,380,528	1,061,054	652,284	1,373,344	1,282,450
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	4,586,792	4,147,071	2,060,156	20	2,027,912
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	23,868,379	19,226,673	14,316,391	8,960,872	2,389,765
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ		147,305			1,752,584
Հիմնական միջոցներ	13,233	16,021	3,087	3,059	413
Ոչ նյութական ակտիվներ	22,777	21,621	14,347	7,767	4,354
Այլ ակտիվներ	44,107	12,461	1,109	4,310	
<b>Ընդամենը՝ ակտիվներ</b>	<b>29,915,816</b>	<b>24,632,206</b>	<b>17,047,374</b>	<b>10,349,372</b>	<b>7,457,478</b>
<b>ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ</b>					
<b>Պարտավորություններ</b>					
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13,315,733	8,811,777	2,885,584		
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	3,541,341	4,184,498	4,507,000	4,512,171	2,403,212
Պարտավորություններ AFD					
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն	60,120	44,996	39,101	46,001	2,285
Հետաձգված հարկային պարտավորություն	55,606	45,867	31,698	17,298	8,586
Թողարկված պարտատոմսեր	2,259,703	1,442,764	963,593		
Այլ պարտավորություններ	9,159	6,279	4,375	3,521	1,160
<b>Ընդամենը՝ պարտավորություններ</b>	<b>19,241,659</b>	<b>14,536,181</b>	<b>8,431,351</b>	<b>4,578,991</b>	<b>2,415,243</b>
<b>Սեփական կապիտալ</b>					



Բաժնետիրական կապիտալ	9,202,500	9,202,500	8,180,000	5,500,000	5,000,000
Գլխավոր պահուստ	48,443	28,336	13,991	2,112	
Վերագնահատման պահուստ					
Զբաղիված շահույթ	1,423,214	865,189	422,032	268,269	42,235
<b>Ընդամենը՝ սեփական կապիտալ</b>	<b>10,674,157</b>	<b>10,096,025</b>	<b>8,616,023</b>	<b>5,770,381</b>	<b>5,042,235</b>
<b>Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ</b>	<b>29,915,816</b>	<b>24,632,206</b>	<b>17,047,374</b>	<b>10,349,372</b>	<b>7,457,478</b>

**ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ**

*Հազար դրամ*

Անվանումը	01.01.2013- 31.12.2013թթ	01.01.2012- 31.12.2012թթ	01.01.2011- 31.12.2011թթ.	01.01.2010- 31.12.2010թթ	16.06.2009- 31.12.2009թթ.
<b>Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր</b>					
Շահույթ մինչև հարկումը	723,991	573,777	433,018	285,730	53,285
<i>Ճշգրտումներ</i>					
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	7,632	6,262	3,650	1,725	322
Ստացվելիք տոկոսներ	(50,226)	(63,961)	(69,949)	(13,960)	(8,820)
Վճարվելիք տոկոսներ	4,871	8,348	(1,216)	11,803	7,155
Արժեթղթերի գծով հաշվարկված գեղչատոկոս	(39,962)	96,426	8,930		(21,957)
Պետական տոկոսային արժ գծով ստացվելիք գեղչատոկոս	(2,696)	(21,391)			
<b>Դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները</b>	<b>643,610</b>	<b>599,461</b>	<b>374,433</b>	<b>285,298</b>	<b>29,985</b>
<i>(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում</i>					
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(430,000)	(2,050,567)	(2,050,000)	2,025,000	(2,025,000)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	(4,593,341)	(4,866,490)	(5,293,561)	(6,554,243)	(2,383,849)
Այլ գործառնական պարտավորություններ	2,877	1,904	855	(4,310)	-
Այլ գործառնական ակտիվներ	(28,021)	351	1,050	2,361	1,160
<b>Զուտ դրամական հոսքեր գործառնական</b>	<b>(4,404,875)</b>	<b>(6,286,779)</b>	<b>(6,967,223)</b>	<b>(4,245,894)</b>	<b>(4,377,704)</b>

<b>գործունեությունից մինչև և շահութահարկը</b>					
Վճարված շահութահարկ	(120,996)	(95,109)	(79,877)	(5,156)	(179)
<b>Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր</b>	<b>(4,525,871)</b>	<b>(6,441,519)</b>	<b>(7,047,100)</b>	<b>(4,251,050)</b>	<b>(4,377,883)</b>
<b>Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր</b>					
Ներդրումային արժեթղթերի մարում (ծեռք բերում)	150,000	(125,716)	0	1,752,584	(1,730,627)
Հիմնական միջոցների առք	(2,193)	(17,315)	(2,492)	(3,738)	(547)
Ոչ նյութական ակտիվների առք	(3,809)	(9,045)	(7,766)	(4,046)	(4,542)
<b>Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսքեր</b>	<b>143,998</b>	<b>(152,076)</b>	<b>(10,258)</b>	<b>1,744,800</b>	<b>(1,735,716)</b>
<b>Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր</b>					
Բաժնետիրական կապիտալի թողարկում		1,022,500	2,500,000	500,000	5,000,000
ՀՀ կառավարությունից վարկերի ներգրավում	(641,888)	(320,718)		2,097,156	2,396,057
ՀՀ ԿԲ-ից վարկերի ներգրավում	4,497,816	5,916,059	2,881,629		
Թողարկված պարտքային արժեթղթեր	856,900	412,443	954,663		
<b>Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական հոսքեր</b>	<b>4,712,828</b>	<b>7,030,284</b>	<b>6,336,292</b>	<b>2,597,156</b>	<b>7,396,057</b>
<b>Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ</b>	<b>330,955</b>	<b>436,689</b>	<b>(721,066)</b>	<b>90,906</b>	<b>1,282,458</b>
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	1,088,987	652,298	1,373,364	1,282,458	
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		0			
<b>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ</b>	<b>1,419,942</b>	<b>1,088,987</b>	<b>652,298</b>	<b>1,373,364</b>	<b>1,282,458</b>

**Թողարկողի 2009-2013 թվականների ամփոփ ֆինանսական ցուցանիշներն ունեն հետևյալ տեսքը**

<b>Ցուցանիշի անվանումը</b>	<b>31.12.2013</b>	<b>31.12.2012</b>	<b>2011</b>	<b>2010</b>	<b>2009</b>
<b>Չուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո (ՉԾ), 1000 ՀՀ դրամ</b>	578,132	457,503	345,642	228,146	42,235
Սեփական կապիտալի միջին մեծություն (ՍԿ), 1000 ՀՀ դրամ	10,385,091	9,356,024	7,193,202	5,406,308	5,042,235
<b>Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)% = (ՉԾ)/(ՍԿ)</b>	<b>5.6%</b>	<b>4.9%</b>	<b>4.8%</b>	<b>4.2%</b>	<b>0.8%</b>
<b>Չուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո (ՉԾ), 1000 ՀՀ դրամ</b>	578,132	457,503	345,642	228,146	42,235
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն (ՄԱ), 1000 ՀՀ դրամ	27,274,011	20,839,790	13,698,373	8,903,425	7,457,478
<b>Ակտիվների շահութաբերություն (ROA)% = (ՉԾ)/(ՄԱ)</b>	<b>2.1%</b>	<b>2.2%</b>	<b>2.5%</b>	<b>2.6%</b>	<b>0.6%</b>
<b>Չուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո (ՉԾ), 1000 ՀՀ դրամ</b>	578,132	457,503	345,642	228,146	42,235
Գործառնական եկամուտ (ԳԵ), 1000 ՀՀ դրամ	2,262,078	1,599,876	934,126	640,467	85,165
<b>Չուր շահույթի մարժա (NPM) % (ՉԾ)/(ԳԵ)</b>	<b>27.0%</b>	<b>28.6%</b>	<b>37.0%</b>	<b>35.6%</b>	<b>49.6%</b>
Գործառնական եկամուտ (ԳԵ), 1000 ՀՀ դրամ	2,262,078	1,599,876	934,126	640,467	85,165
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն (ՄԱ), 1000 ՀՀ դրամ	27,274,011	20,839,790	13,698,373	8,903,425	7,457,478
<b>Ակտիվների օգտագործման գործակից % (AU) = (ԳԵ)/(ՄԱ)</b>	<b>8.3%</b>	<b>7.7%</b>	<b>6.8%</b>	<b>7.2%</b>	<b>1.1%</b>
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն (ՄԱ), 1000 ՀՀ դրամ	27,274,011	20,839,790	13,698,373	8,903,425	7,457,478
Սեփական կապիտալի միջին մեծություն (ՍԿ), 1000 ՀՀ դրամ	10,385,091	9,356,024	7,193,202	5,406,308	5,042,235
<b>Սեփական կապիտալի մուտքի պլիկապոր (EM) = (ՄԱ)/(ՍԿ)</b>	<b>262.6%</b>	<b>222.7%</b>	<b>190.4%</b>	<b>164.7%</b>	<b>147.9%</b>
Չուտ տոկոսային եկամուտ (ՉՏԵ), 1000 ՀՀ դրամ	880,169	713,208	542,581	357,610	75,515
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն (ՄԵԱ), 1000 ՀՀ դրամ	25,988,110	19,948,798	12,668,720	7,565,577	6,170,261
<b>Չուր տոկոսային մարժա (NIM) (A/B)</b>	<b>3.4%</b>	<b>3.6%</b>	<b>4.3%</b>	<b>4.7%</b>	<b>1.2%</b>
Տոկոսային եկամուտ (ՏԵ), 1000 ՀՀ դրամ	2,262,078	1,599,876	934,126	640,467	85,165
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն (ՄԵԱ), 1000 ՀՀ դրամ	25,988,110	19,948,798	12,668,720	7,565,577	6,170,261

<b>Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն (ՏԵ)/(ՄԵԱ), %</b>	<b>8.7%</b>	<b>8.0%</b>	<b>7.4%</b>	<b>8.5%</b>	<b>1.4%</b>
Տոկոսային ծախսեր (ՏԾ), 1000 ՀՀ դրամ	1,381,909	886,668	391,545	282,857	9,650
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր (ՄԾՊ), 1000 ՀՀ դրամ	16,777,908	11,397,608	6,434,174	3,457,692	2,403,212
<b>Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են ծախսեր (ՏԾ)/(ՄԾՊ)</b>	<b>8.2%</b>	<b>7.8%</b>	<b>6.1%</b>	<b>8.2%</b>	<b>0.4%</b>
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո (ՋՇ), 1000 ՀՀ դրամ	578,132	457,503	345,642	228,146	42,235
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը (ԲՔ)	900,000	800,000	800,000	525,000	500,000
<b>Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) (ՋՇ)/(ԲՔ), 1000 ՀՀ դրամ</b>	<b>64.2%</b>	<b>57.2%</b>	<b>43.2%</b>	<b>43.5%</b>	<b>8.4%</b>
Տոկոսային եկամուտներ (ՏԵ), 1000 ՀՀ դրամ	2,262,078	1,599,876	934,126	640,467	85,165
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն (ՄԵԱ), 1000 ՀՀ դրամ	25,988,110	19,948,798	12,668,720	7,565,577	6,170,261
Տոկոսային ծախսեր (ՏԾ), 1000 ՀՀ դրամ	1,381,909	886,668	391,545	282,857	9,650
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր (ՄԾՊ), 1000 ՀՀ դրամ	16,777,908	11,397,608	6,434,174	3,457,692	2,403,212
<b>ՄՊՐԵԴ = (ՏԵ)/(ՄԵԱ)-(ՏԾ)/(ՄԾՊ)</b>	<b>0.5%</b>	<b>0.2%</b>	<b>1.3%</b>	<b>0.3%</b>	<b>1.0%</b>

Կազմակերպության տարեկան և եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները, ներառյալ կից ծանոթագրությունները տեղադրված են Կազմակերպության ինտերնետային էջում, հետևյալ հասցեով <http://www.nmc.am/pages.php?al=finstate> :

## 2 ԲԱԺԻՆ. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 2.1 Ռիսկային գործոններ

- 2.1.1 Ներդրումները պարտատոմսերում, ինչպես և այլ արժեթղթերում, ենթակա են որոշակի ռիսկերի, որոնք կապված են ինչպես թողարկողի ֆինանսատնտեսական վիճակից և գործունեության արդյունքներից (թողարկողի ռիսկ), այնպես էլ ֆինանսական շուկայում տիրող իրավիճակից (շուկայական ռիսկ):
- 2.1.2 Թողարկողի ռիսկը կայանում է թողարկող կազմակերպության կողմից պարտատոմսերի թողարկմամբ ստանձնած պարտավորությունները ժամանակին ամբողջությամբ կամ մասնակի չկատարելու, կամ թողարկողի վարկանիշի վատթարացման մեջ:
- 2.1.3 Շուկայական ռիսկը առաջանում է տնտեսությունում պարտատոմսերի գնի վրա ազդող գործոնների փոփոխության հետևանքով, ինչի արդյունքում ներդրողը կարող է կրել կորուստներ:
- 2.1.4 Վերը նշված ռիսկերի բաղադրիչները և դրանց հնարավոր ազդեցությունները ներկայացված են սույն փաստաթղթում: Ներդրողը ներդրում կատարելու վերաբերյալ

որոշում կայացնելու ընթացքում պետք է մանրակրկիտ ուսումնասիրի և վերլուծի ներդրման հետ կապված և սույն փաստաթղթում բացահայտված հավանական ռիսկերը, ինչպես նաև ներկայացված այլ տեղեկատվությունը:

- 2.1.5 Պետք է հաշվի առնել նաև, որ սույն փաստաթղթում ներկայացված ռիսկերի ցանկը սպառիչ չէ և հնարավոր է անկանխատեսելի բնույթ ունեցող որևէ իրադարձության/ռիսկի (այլ ռիսկեր) ի հայտ գալը, որը կարող է բացասական ազդեցություն ունենալ ներդրումների վերադարձելիության կամ արժեքի վրա: Ներդրողը պետք է ներդրման որոշումը կայացնելիս ամբողջությամբ գիտակցի ներդրման էությունը և առաջնորդվի նաև իր սեփական փորձով, նպատակներով և ակնկալիքներով:
- 2.1.6 Ֆիզիկական անձ ներդրողներին հայտնվում է, որ

### **ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՐՈՒՄԸ ՉԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ:**

- 2.1.7 **Թողարկողի ռիսկ**՝ պայմանավորված է թողարկող կազմակերպության ֆինանսական վիճակի վատթարացմամբ, ինչի արդյունքում թողարկողը ի վիճակի չի լինում սահմանված ժամկետներում ամբողջությամբ կամ մասնակի կատարել պարտատոմսերի թողարկման պայմաններով սահմանված վճարումները: Այս դեպքում ներդրողների ռիսկը կայանում է ներդրված գումարների ամբողջությամբ կամ մասնակի կորստի մեջ: Թողարկողի ռիսկը արտահայտվում է նաև պարտատոմսերի գնի նվազմամբ, ինչի պատճառ է հանդիսանում թողարկող կազմակերպության գործունեությունը: Մասնավորապես, պարտատոմսերի գնի վրա բացասական ազդեցություն կարող են ունենալ թողարկողի ֆինանսատնտեսական ցուցանիշների վատթարացումը, վարկանիշի նվազեցումը, ռիսկային գործունեություն ծավալելը, շուկայում մասնաբաժնի նվազումը և այլն: Թողարկողի ռիսկի առաջացման պատճառ կարող են հանդիսանալ նաև այլ ռիսկերը, որոնց ի հայտ գալը կախված չէ թողարկողից: Թողարկողի ռիսկի տարատեսակ է հանդիսանում նաև իրացվելիության ռիսկը, երբ Թողարկողը պարտատոմսերի պայմաններով սահմանված վճարման ժամկետում չի ունենում բավարար դրամական միջոցներ վճարումը կատարելու համար: Կազմակերպությունը իրացվելիության ռիսկը նվազեցնելու նպատակով իրականացնում է դրամական հոսքերի փոխհամաձայնեցված կառավարում (cash flow matching)՝ Կազմակերպությունը տեղաբաշխում է իր միջոցները այնպես, որ դրանց մարումները համապատասխանում են պարտատոմսերի մարումներին ըստ ծավալի և ժամկետների:
- 2.1.8 **Շուկայական ռիսկ**՝ շուկայական ռիսկի հիմնական տարատեսակներն են տոկոսադրույքի ռիսկը և արտարժույթային ռիսկը: Տոկոսադրույքի ռիսկը առաջանում է շուկայական տոկոսադրույքների փոփոխության հետևանքով՝ տոկոսադրույքների աճի դեպքում պարտատոմսերի գինը նվազում է, ինչը կարող է հանգեցնել նրան, որ ներդրողը, մինչև մարումը պարտատոմսը վաճառելու դեպքում կարող է կրել վնասներ, կամ չստանալ նախատեսված եկամուտը: Արտարժույթի ռիսկը առաջանում է ազգային դրամի փոխարժեքի տատանումների պատճառով և կարող է բացասաբար ազդեցություն ունենալ ներդրողի պարտատոմսերից ստացված եկամուտների վրա, երբ ներդրողը պարտատոմսից ստացված եկամուտը գնահատում է արտարժույթով (օրինակ՝ ներդրում կատարելու համար օտարերկրյա ներդրողը արտարժույթային միջոցները փոխարկել է ՀՀ դրամի և

պարտատոմսի մարումից հետո ստացված ՀՀ դրամը փոխարկում է արտարժույթի): Մասնավորապես, ազգային արժույթի արժեզրկման դեպքում, պարտատոմսի մարումից ստացված գումարները (ներառյալ տոկոսները) փոխարկելու դեպքում, արտարժույթով հաշվարկված եկամուտը կարող է նախատեսվածից քիչ (բացասական) լինել:

Բացի վերը նշված ռիսկերից, ներդրողը պետք է հաշվի առնի, որ պարտատոմսերի երկրորդային շուկայի թերզարգացվածությունը կարող է հանգեցնել պարտատոմսերի իրացվելիության ռիսկի, երբ ներդրողը ստիպված է վաճառել պարտատոմսերը իր արժեքից ցածր գնով:

2.1.9 **Պարտատոմսերի իրացվելիության ռիսկ՝** պարտատոմսերի շուկայի զարգացվածության ցածր մակարդակի պայմաններում կարող է ստեղծվել այնպիսի իրավիճակ, երբ պարտատոմսի սեփականատերը ցանկացած պահի պարտատոմսերը վաճառելու հետ կապված դժվարությունների բախվի: Մասնավորապես, հնարավոր է, որ պարտատոմսի սեփականատերը չկարողանա իր ուզած պահին վաճառել պարտատոմսը կամ ստիպված լինի այն վաճառել ցածր գնով, կրելով վնասներ: Այս ռիսկը նվազեցնելու նպատակով Թողարկողը նախատեսում է ապահովել թողարկվող պարտատոմսերի համար շուկա ստեղծողի գործառույթների իրականացում, այդ դեպքում ներդրողը ցանկացած պահին կկարողանա վաճառել իր պարտատոմսերը, բայց դա չի երաշխավորում պարտատոմսի սեփականատիրոջ կողմից շահավետ գնով վաճառք:

2.1.10 Վերը նշված ռիսկերից բացի Թողարկողը կարող է բախվել նաև այլ ռիսկերի հետ, որոնք Թողարկողը սույն փաստաթղթում նշելու համար էական չի համարել:

## 2.2 Հիմնական տեղեկատվություն

Կազմակերպության անվանական պարտատոմսերի թողարկման և դրան հետևող տեղաբաշխման նպատակն է միջոցների ներգրավումը, որոնք ուղղվելու են Կազմակերպության հիմնական գործունեության ֆինանսավորմանը, այն է Կազմակերպության հետ համագործակցող բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորմանը:

## 2.3 Առաջարկի համակողմանի նկարագիրը

2.3.1 Կազմակերպության պարտատոմսերն անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային պարտատոմսեր են, որոնց թողարկումն իրականացվում է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների:

2.3.2 Հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, Վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ի 7.5 և 7.6 կետերի պահանջները՝ ՀՀ ԿԲ ֆինանսական վերահսկողության վարչությունը «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ին թույլատրել է 2014թ. ընթացքում մինչև 5,000,000,000 (հինգ միլիարդ) ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով պարտատոմսերի թողարկման միջոցով ֆիզիկական անձանցից ևս ներգրավել միջոցներ:

2.3.3 Պարտատոմսերի ռեեստրը վարվում է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի (այսուհետ՝ ՀԿԴ) կողմից՝ համաձայն Կազմակերպության և ՀԿԴ-ի միջև 2014 թվականի մարտի 21-ին «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ նաև՝ Հաշվի օպերատոր) միջնորդությամբ կնքված թիվ ՊՌ-100295-010/2014 պայմանագրի:

- 2.3.4 ՀԿԴ կողմից պարտատոմսերին շնորհված ԱՆԾ-ն է (արժեթղթերի նույնականացնող ծածկագիր)՝ 00NMCCB2AER5:
- 2.3.5 Մեկ պարտատոմսի անվանական արժեքը 100,000.00 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ է: Թողարկվող պարտատոմսերի քանակը կազմում է 10,000 (տաս հազար) հատ պարտատոմս՝ 1,000,000,000.00 (մեկ միլիարդ) ՀՀ դրամ ընդհանուր անվանական արժեքով:
- 2.3.6 Պարտատոմսերի արժեկտրոնները վճարվելու են կիսամյակային պարբերականությամբ:
- 2.3.7 Պարտատոմսերը փոխարկելի չեն:
- 2.3.8 Պարտատոմսերը թողարկվում են ՀՀ դրամով:
- 2.3.9 Ընկերությունը կօգտվի նաև շուկա ստեղծողի (marketmaker)-ի ծառայություններից, որոնք նույնպես կմատուցվեն «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ նաև՝ Շուկա ստեղծող) կողմից՝ համաձայն Կազմակերպության և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի միջև 2014 թվականի մարտի 21-ին կնքված պայմանագրի:
- 2.3.10 Կազմակերպության առաջարկվող պարտատոմսերի մարումների և Կազմակերպության կողմից ներգրավված այլ պարտավորությունների մարումների միջև ստորադասություն չկա: Այսինքն, Կազմակերպությունը չունի այնպիսի պարտավորություն, որի պարտատերերը ունեն մարման առաջնահերթություն այլ պարտատերերի, այդ թվում նաև առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի նկատմամբ: Կազմակերպության սնանկության դեպքում, Կազմակերպության գրավով ապահովված պարտավորությունները բավարարվում են տվյալ պարտավորության ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկայի իրացումից ստացված գումարից՝ արտահերթ: Եթե պարտավորության արժեքը գերազանցում է տվյալ պարտավորության ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկայի իրացման արժեքը, ապա գրավով չապահովված պարտավորության մասը բավարարվում է այլ պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորությունների հետ համատեղ՝ համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով սահմանված կարգով: Առաջարկվող պարտատոմսերի դեպքում, սեփականատերերի պահանջները՝ գրավի իրացման արժեքի գերազանցման դեպքում կբավարարվեն Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ կետի ա) և բ) ենթակետերով սահմանված պահանջները բավարարելուց հետո:
- 2.3.11 Պարտատոմսերի ապահովվածությունը՝ առաջարկվող պարտատոմսերը ապահովված են Կազմակերպության կողմից իր գործընկեր ֆինանսական հաստատություններին տրամադրված վարկերից բխող պահանջի իրավունքի գրավով<sup>2</sup>: Ապահովվածություն հանդիսացող վարկերի ցանկը ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

<sup>2</sup> Պարտատոմսերի դիմաց վճարումները (արժեկտրոնի վճարումը և պարտատոմսերի մարումը) հանդիսանում են Կազմակերպության պարտավորությունը և կապված չեն ապահովվածություն հանդիսացող վարկերից ստացվող դրամական հոսքերից:

N	ՎՀՊ-ի կնքման ամսաթիվ	ՎՀՊ-ի անվանում	ՎՀՊ-ի պայմ. Գումար	ՎՀՊ-ի մարման ամսաթիվ	ՎՀՊ-ի մնացորդը 18.03.14թ. Դրույթամբ
1	25/01/11	ABB-032	110,415,105.60	20/01/20	51,560,536.30
2	26/12/11	ABB-056	67,363,964.20	21/12/20	52,163,200.20
3	25/11/13	ABB-095	39,553,307.50	21/11/22	38,779,338.30
			<b>217,332,377.30</b>		<b>142,503,074.80</b>
4	10/06/13	ADB-014	19,806,465.30	21/06/21	18,980,233.10
			<b>19,806,465.30</b>		<b>18,980,233.10</b>
5	25/06/10	AEB-008	50,300,000.00	20/06/19	23,931,845.50
6	10/12/13	AEB-030	20,454,446.40	20/12/21	20,454,446.40
			<b>70,754,446.40</b>		<b>44,386,291.90</b>
7	10/05/10	ANE-005	44,677,876.00	20/05/19	34,421,859.00
8	25/06/10	ANE-007	35,042,882.00	20/06/19	21,444,110.20
9	11/11/13	ANE-032	24,413,233.00	22/11/21	23,935,513.70
			<b>104,133,991.00</b>		<b>79,801,482.90</b>
10	25/02/11	ARA-012	42,569,794.00	20/02/20	31,536,809.40
11	11/06/12	ARA-025	36,199,584.30	21/06/21	32,035,348.90
			<b>78,769,378.30</b>		<b>63,572,158.30</b>
12	12/08/13	ARE-026	32,194,968.00	20/08/21	30,843,738.40
13	26/08/13	ARE-027	19,770,999.90	20/08/19	18,464,798.60
14	25/11/13	ARE-030	22,356,025.30	22/11/21	21,843,531.00
15	10/12/13	ARE-031	28,331,020.60	20/12/21	28,331,020.60
			<b>102,653,013.80</b>		<b>99,483,088.60</b>
16	25/12/12	ART-031	39,894,950.30	20/12/21	36,784,717.80
17	11/11/13	ART-044	35,534,507.90	21/11/22	34,958,437.20
			<b>75,429,458.20</b>		<b>71,743,155.00</b>
18	25/05/10	ASB-004	72,171,258.30	20/05/19	48,207,970.50
19	25/02/13	ASB-036	53,704,576.00	21/02/22	38,258,242.70
			<b>125,875,834.30</b>		<b>86,466,213.20</b>
20	26/07/10	BBA-002	47,590,612.00	22/07/19	30,160,767.90
21	10/09/13	BBA-031	19,999,463.00	20/09/22	19,675,240.00
22	10/10/13	BBA-033	19,810,000.00	20/10/22	19,493,597.50
23	25/11/13	BBA-035	39,228,301.60	21/11/22	38,460,692.00
			<b>126,628,376.60</b>		<b>107,790,297.40</b>
24	25/12/12	CON-026	39,236,557.30	21/12/20	35,633,281.40
25	11/11/13	CON-040	158,628,738.90	22/11/21	155,524,684.30
			<b>197,865,296.20</b>		<b>191,157,965.70</b>
26	10/10/13	EXP-008	19,999,000.00	20/10/22	19,679,578.70
			<b>19,999,000.00</b>		<b>19,679,578.70</b>
27	25/12/12	FMC-049	33,500,000.00	21/12/20	25,279,134.10
28	25/07/13	FMC-062	37,253,228.30	20/07/22	35,824,249.90



			<b>70,753,228.30</b>		<b>61,103,384.00</b>
29	25/12/12	GAA-001	24,316,906.00	20/12/21	20,859,133.50
30	11/11/13	GAA-003	22,793,027.20	21/11/22	22,423,516.10
			<b>47,109,933.20</b>		<b>43,282,649.60</b>
31	25/05/10	WAS-012	73,296,169.90	20/05/19	32,437,314.60
32	10/08/12	GLB-032	35,000,000.00	20/08/21	30,991,066.60
33	25/02/13	GLB-038	38,694,056.70	21/02/22	35,676,280.40
34	25/04/13	GLB-041	33,850,404.50	20/04/22	31,893,710.70
35	11/11/13	GLB-052	20,000,000.00	22/11/21	19,608,639.10
			<b>200,840,631.10</b>		<b>150,607,011.40</b>
36	25/03/11	INE-017	33,424,667.80	20/03/18	22,609,473.50
37	27/02/12	INE-028	41,654,842.80	20/02/19	24,678,861.50
38	25/06/12	INE-032	32,500,000.00	22/06/20	27,948,417.60
39	10/08/12	INE-036	28,806,793.20	21/08/17	21,518,107.70
40	25/11/13	INE-057	26,564,936.70	22/11/21	24,070,535.30
41	25/11/13	INE-058	20,000,000.00	21/11/22	19,608,645.00
			<b>182,951,240.50</b>		<b>140,434,040.60</b>
42	25/10/13	KLK-001	20,000,000.00	20/10/22	19,608,645.00
			<b>20,000,000.00</b>		<b>19,608,645.00</b>
43	25/04/13	SWS-014	20,000,000.00	20/04/21	18,638,104.10
44	25/06/13	SWS-017	20,000,000.00	21/06/21	19,092,207.80
45	11/11/13	SWS-020	19,500,000.00	22/11/21	19,118,423.10
46	10/12/13	SWS-022	28,710,000.00	20/12/21	25,601,077.10
			<b>88,210,000.00</b>		<b>82,449,812.10</b>
47	25/12/12	UNI-011	39,857,922.60	20/12/21	18,781,000.00
48	10/12/13	UNI-016	36,357,809.80	20/12/22	36,357,809.80
			<b>76,215,732.40</b>		<b>55,138,809.80</b>
49	10/12/10	VTB-021	86,300,119.60	20/12/19	52,109,712.10
50	25/10/11	VTB-038	76,201,204.60	20/10/20	49,926,130.00
51	10/12/13	VTB-078	38,111,300.90	20/12/22	38,111,300.90
			<b>200,612,625.10</b>		<b>140,147,143.00</b>
			<b>2,025,941,028.00</b>		<b>1,618,335,035.10</b>

2.3.12 Պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն.

2.3.12.1 ինքնուրույնաբար տնօրինել, տիրապետել և օգտագործել իր սեփականաության ներքո գտնվող Պարտատոմսերը,

2.3.12.2 Պարտատոմսերով իրականացնել ցանկացած գործառույթ, որը բխում է սեփականության իրավունքից,

2.3.12.3 Թողարկման օրվանից հաշված կիսամյակային պարբերությամբ՝ համապատասխան արժեկտրոնների վճարման օրերին ստանալ արժեկտրոնային եկամուտը: Եթե տվյալ օրը ոչ աշխատանքային օր է, ապա արժեկտրոնի վճարումը իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին

- աշխատանքային օրը,
- 2.3.12.4 Պարտատոմսերի մարման օրը ստանալ պարտատոմսերի անվանական արժեքը (մարման գումարը): Եթե տվյալ օրը ոչ աշխատանքային օր է, ապա պարտատոմսերի մարման գումարի վճարումը իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը,
- 2.3.12.5 Կազմակերպության կողմից Պարտատոմսերի մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու հիմքով դատական կարգով օգտվել պարտատիրոջ օրենքով վերապահված իրավունքներից,
- 2.3.12.6 գրավադրել Պարտատոմսերը՝ օրենքով սահմանված կարգով,
- 2.3.12.7 Օրենքով նախատեսված այլ իրավունքներ:
- 2.3.13 Սեփականատիրոջ պարտավորությունները.
- 2.3.13.1 Պարտատոմսերում պոտենցիալ ներդրողները պարտավոր են մինչև Պարտատոմսերի ձեռք բերումը ՀԿԴ արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում կամ ՀԿԴ ենթապահառու հանդիսացող այլ անձանց մոտ ունենալ սեփականատիրոջ (անվանատիրոջ) արժեթղթերի հաշիվ:
- 2.3.13.2 իր հաշվին կատարել պարտատոմսերի ձեռք բերման կամ օտարման հետ կապված պարտադիր վճարները՝ կապված սեփականության իրավունքի գրանցման և/կամ գործարքների ձևակերպման հետ:
- 2.3.13.3 կատարել Պարտատոմսերի ձեռքբերումից, օտարումից և այլ գործառնություններից ծագող դրամային և ոչ դրամային ցանկացած պարտավորություն:
- 2.3.14 Պարտատոմսերը տեղաբաշխվում են Բորսայի տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով, Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով:
- 2.3.15 Պարտատոմսերի թողարկման վերաբերյալ թիվ 003L որոշումն ընդունվել է 2014 թվականի մարտի 17-ին Կազմակերպության խորհրդի կողմից: Պարտատոմսերի թողարկման օրը՝ 2014թ.-ի ապրիլի 23:
- 2.3.16 Արժեկտրոնի տոկոսադրույքը՝ ֆիքսված՝ տարեկան 10%:
- 2.3.17 Արժեկտրոնի գումարը՝ 5,000 ՀՀ դրամ մեկ պարտատոմսի դիմաց յուրաքանչյուր արժեկտրոնի վճարմանը:
- 2.3.18 Արժեկտրոնների վճարման պարբերականությունը՝ կիսամյակային (2 անգամ օրացուցային տարվա մեջ), տեղաբաշխման օրվան հաջորդող 6-րդ, 12-րդ, 18-րդ, 24-րդ, 30-րդ և 36-րդ ամիսների համապատասխան օրը: Եթե արժեկտրոնների վճարման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնների վճարման օր է հանդիսանում այդ օրվան հաջորդող աշխատանքային օրը:
- 2.3.19 Օրերի հաշվարկման պայմանականությունը՝ փաստացի/փաստացի

DCS=Օրերի փաստացի քանակը, D2M2Y2 - D1M1Y1

DCC=Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 - D1M1Y1

DSN=Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 - D2M2Y2

որտեղ՝

D1M1Y1 գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է.

D2M2Y2 գործարքի կատարման ամսաթիվն է

D3M3Y3 գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է:

2.3.20 Արժեկտրոնի կուտակումը՝  $AI = FV * \frac{C}{f} * \frac{DGS}{DCC}$

որտեղ

AI - կուտակված տոկոս,

FV - պարտատոմսերի անվանական արժեք,

C - արժեկտրոնի տարեկան անվանական տոկոսադրույք,

f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (f=2՝ կիսամյակային վճարումների դեպքում):

Արժեկտրոնի կուտակումը սկսում է հաշվարկվել պարտատոմսերի թողարկման օրվանից,

2.3.21 Պարտատոմսերի գինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով

$$DP = \frac{C}{f} \sum_{t=1}^N \frac{1}{\left(1 + \frac{y}{100 + f}\right)^{t-1+\tau}} + \frac{100}{\left(1 + \frac{y}{100 + f}\right)^{N-1+\tau}}$$
$$\tau = \frac{DSN}{DCC}$$

որտեղ՝

DP- Պարտատոմսի գինն է,

DSN- գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է,

DCC-գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է,

f-արժեկտրոնի վճարման հաճախականությունն է,

N-հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը

C- տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց

y- թողարկման պահին մինչև մարում եկամտաբերություն:

2.3.22 Պարտատոմսերի եկամտաբերությունը հաշվարկվում է 2.3.20 կետում ներկայացված բանաձևի միջոցով:

2.3.23 Պարտատոմսերի մարման օրը՝ պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկված 36-րդ ամսվա համապատասխան օրը: Եթե պարտատոմսերի մարման օրը ոչ աշխատանքային է, ապա պարտատոմսերի մարման օր է հանդիսանում այդ օրվան հաջորդող աշխատանքային օրը,

2.3.24 Արժեկտրոնների վճարումները և պարտատոմսերի մարումն իրականացվում են <<

դրամով, անկանխիկ եղանակով:

- 2.3.25 Արժեկտրոնների վճարումներն և պարտատոմսերի մարումն իրականացվում է արժեկտրոնի վճարման օրվան և/կամ պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրվա վերջի (ժամը 24:00–ի) դրությամբ Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածքի հիման վրա, համաձայն որի Կազմակերպությունը մարման օրը հանձնարարական է տալիս իր սպասարկող բանկին՝ համապատասխան վճարումները փոխանցելու Պարտատոմսերի սեփականատերերի՝ ՀՀ տարածաքում գործող բանկերում բացված ՀՀ դրամով բանկային հաշիվներին (այսուհետ՝ բանկային հաշիվ):
- 2.3.26 Պարտատոմսերի մարման կատարում և/կամ արժեկտրոնների վճարում՝ պարտատոմսերի մարման օրը և/կամ արժեկտրոնների վճարման օրը պարտատոմսի սեփականատիրոջ բանկային հաշիվին համապատասխան վճարումների մուտքագրում
- 2.3.27 Պարտատոմսի մարման և մարման կատարման (վճարման) ամսաթվերը նույնն են: Արժեկտրոնի մարման և արժեկտրոնների վճարման ամսաթվերը (յուրաքանչյուր ժամկետի համար) նույնն են:
- 2.3.28 Կազմակերպությունը չի փոխանցում վճարումները այն սեփականատերերին, որոնց բանկային հաշվի մասին տեղեկությունները բացակայում են Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածքում և Կազմակերպությունը այլ կերպ չի տիրապետում այդ տեղեկությանը: Այս դեպքում Կազմակերպությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում, այդ սեփականատերերի վճարումները փոխանցում է նոտարի դեպոզիտ:
- 2.3.29 Պարտատոմսերի ազատ շրջանառելիության սահմանափակում պարտատոմսերի թողարկման պայմաններով սահմանված չէ,
- 2.3.30 Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում Կազմակերպությունը սահմանված կարգով դիմում է Բորսա՝ պարտատոմսերի շրջանառությունը կարգավորվող շուկայում ապահովելու նպատակով:
- 2.3.31 Պարտատոմսերից ստացված եկամուտը ենթակա է հարկման ըստ հետևյալ հարկատեսակների.
- Շահութահարկ,
  - Եկամտային հարկ:
- 2.3.32 Ընդհանուր առմամբ, պարտատոմսերից եկամուտ ստացվում է հետևյալ տեսքով.
1. Տոկոսային եկամուտ (պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոս),
  2. Կապիտալի հավելված (ծեռք բերումից հետո պարտատոմսի գինը ավելանում է, իսկ կապիտալի հավելվածը հաշվարկվում է, որպես մինչև մարումը վաճառքի և ծեռք բերման գնի դրական տարբերություն):
- 2.3.33 Շահութահարկ վճարող են համարվում ՀՀ տարածքում գործող ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք: Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Ներկայումս շահութահարկի դրույքը կազմում է հարկվող շահույթի 20%: Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց շահութահարկի դրույքաչափը պարտատոմսերում ներդրումներից ստացված եկամտի (տոկոսներ, կապիտալի հավելված) համար կազմում է 10%:
- 2.3.34 Եկամտային հարկ վճարող են համարվում ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ռեզիդենտությունը սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ: Հարկվող եկամուտը հաշվարկվում է, որպես ֆիզիկական անձի ստացված համախառն եկամտի և «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված նվազեցումների դրական

տարբերություն: Ֆիզիկական անձանց համար պարտատոմսերից ստացված միայն տոկոսային եկամուտն է ենթակա հարկման, իսկ հարկման դրույքաչափը ներկայումս սահմանված է 10%: Կազմակերպության պարտատոմսերում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ ներդրողների համար Կազմակերպությունը հանդիսանում է հարկային գործակալ:

## **2.4 Առաջարկի ժամկետները և պայմանները**

### **2.4.1 Առաջարկի պայմանները, առաջարկի վիճակագրությունը, ակնկալվող ժամանակացույցը և այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են առաջարկից օգտվելու համար**

2.4.1.1 Կազմակերպության կողմից թողարկվող պարտատոմսերի ծավալը կազմում է 1,000,000,000.00 (մեկ միլիարդ) ՀՀ դրամ, 10,000.00 (տաս հազար) հատ պարտատոմս, յուրաքանչյուրը 100,000.00 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

2.4.1.2 Պարտատոմսերը տեղաբաշխվում են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ (այսուհետ՝ Բորսա) տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով, Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով:

2.4.1.3 Պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին անմիջապես կարող են մասնակցել միայն Բորսայի անդամները, որոնց ցանկը հասանելի է «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ պաշտոնական կայքում ([www.nasdaqomx.am](http://www.nasdaqomx.am)): Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողները կարող են աճուրդին մասնակցել (օգտվել առաջարկից) Բորսայի անդամների միջոցով՝ վերջիններիս կողմից սահմանված կարգով և պայմաններով:

2.4.1.4 Բորսայի տարբեր մասնակիցներ կարող են սահմանել աճուրդին մասնակցելու (առաջարկից օգտվելու) տարբեր գործընթացներ, պարտատոմսերի դիմաց վճարումներ կատարելու մեթոդներ և ժամկետներ, արժեթղթերը ստանալու մեթոդներ և ժամկետներ, արժեթղթերի վերաբերյալ քաղվածք ստանալու ձևեր, ներդրողների հայտերի բավարարման արդյունքների մասին իրագեկման կարգեր և ձևեր, ինչպես նաև սահմանել տարբեր սակագներ: Այդ իսկ պատճառով, Կազմակերպությունը չի կարող սպառիչ տեղեկություններ հրապարակել նշված հարցերի վերաբերյալ և հորդորում է Բորսայի անդամ չհանդիսացող պոտենցիալ ներդրողներին ուսումնասիրել Բորսայի անդամների կողմից առաջարկվող պայմանները՝ իրենց համար լավագույն տարբերակ գտնելու համար:

2.4.1.5 ՀՀ ԿԲ կողմից Ազդագրի գրանցմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում Թողարկողը և Տեղաբաշխողը սահմանում են ուղղորդիչ նվազագույն գին, որից ցածր գնով ներկայացված հայտերը չեն բավարարվում:

2.4.1.6 Աճուրդը անցկացվում է տեղաբաշխման օրը ժամը 11:00-ից (առաջարկի իրականացման սկիզբ) մինչև ժամը 13:30 (առաջարկի իրականացման ավարտ):

2.4.1.7 Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման օրը՝ 2014թ. ապրիլի 23: Տեղաբաշխման օրվանից առնվազն 3 աշխատանքային օր առաջ Կազմակերպությունն այդ մասին տեղեկությունը հրապարակում է իր պաշտոնական կայքում: Կազմակերպությունը նշված տեղեկությունը կարող է հրապարակել/տարածել նաև այլ միջոցներով:

2.4.1.8 Կազմակերպության պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին ա) չի կարող

- ներկայացվել գնման ոչ մրցակցային հայտ, բ) չի կարող ներկայացվել լրիվ բավարարմամբ հայտ,
- 2.4.1.9 Կազմակերպության պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդը իրականացվում է դրամական միջոցների և պարտատոմսերի նախնական դեպոնացմամբ՝ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններով» սահմանված կարգով,
- 2.4.1.10 Լրացուցիչ դեպոնացումները և ապադեպոնացումները կատարվում են Բորսայի «Կորպորատիվ արժեթղթերի առևտրի կանոններով» և Դեպոզիտարիայի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններով»,
- 2.4.1.11 Տեղաբաշխման աճուրդի ժամանակ գնման հայտերը ներկայացվում են աճուրդի մասնակցի մոտ տեղակայված աշխատանքային կայանից Բորսայի Առևտրային համակարգում (այսուհետ՝ համակարգ) մուտքագրելու միջոցով: Տեղաբաշխման աճուրդի ընթացքում որպես գնորդ հանդիս եկող տեղաբաշխման մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել տեղաբաշխման համակարգ տվյալ աճուրդի տեղաբաշխման օրվա ժամը 11<sup>00</sup>-ից մինչև 13<sup>30</sup>: Աճուրդի մասնակիցը կարող է հետ կանչել կամ փոփոխել իր կողմից ներկայացրած հայտը և նոր հայտ մուտքագրել մինչև 13<sup>30</sup>:
- 2.4.1.12 Միևնույն գին ունեցող հայտերը բավարարվում են ըստ դրանց տեղաբաշխման համակարգ մուտքագրման ժամանակային առաջնահերթության:
- 2.4.1.13 Տեղաբաշխման ընթացքում կնքված գործարքների վերջնահաշվարկն իրականացվում է գործարքի կնքման օրվա ընթացքում,
- 2.4.1.14 Տեղաբաշխման ավարտից հետո Բորսան «Տեղեկատվության բացահայտման կանոններին» համապատասխան կազմակերպում է տեղաբաշխման արդյունքների հրապարակումը իր պաշտոնական կայքում: Կազմակերպությունը պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում իր ինտերնետային կայքում ([www.nmc.am](http://www.nmc.am)) հրապարակում է տեղաբաշխման արդյունքների մասին հաշվետվություն,

## 2.4.2 **Տեղաբաշխման պլանը**

- 2.4.2.1 Սույն փաստաթղթով ներկայացվող առաջարկը ուղղված է ներդրողների բոլոր խմբերին՝ հանրությանը, ինստիտուցիոնալ ներդրողներին և այլն,
- 2.4.2.2 Բորսայի անդամ հանդիսացող ներդրողն իր կողմից ներկայացված հայտի բավարարման մասին տեղեկացվում է աճուրդի արդյունքները ամփոփելուց հետո՝ Բորսային կանոններով սահմանված կարգով: Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողներն իրենց հայտերի բավարարման մասին տեղեկանում են Բորսայի այն անդամից, որի միջոցով մասնակցել են պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և պայմաններով:

## 2.4.3 **Առաջարկի գինը**

- 2.4.3.1 ՀՀ ԿԲ կողմից Ազդագրի գրանցմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում Թողարկողը և Տեղաբաշխողը սահմանում են ուղղորդիչ նվազագույն գին, որից ցածր գնով ներկայացված հայտերը չեն բավարարվում: Այդ մասին տեղեկացումը Թողարկողը և Տեղաբաշխողը հրապարակում են պարտատոմսերի տեղաբաշխման հայտարարության մեջ: Աճուրդի մասնակիցները ներկայացնում

են իրենց առաջարկությունները գնի վերաբերյալ, աճուրդին մասնակցելու առաջարկությունները ներկայացնելու միջոցով:

2.4.3.2 Բորսայի անդամ հանդիսացող ներդրողներից տեղաբաշխման աճուրդի ընթացքում ձեռք բերվող պարտատոմսերի դիմաց գանձվում են միջնորդավճարներ Բորսայի Սակագների մասին կանոններով սահմանված չափերով: Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողներն իրենց կողմից ձեռք բերվող պարտատոմսերի դիմաց գանձվող միջնորդավճարների մասին կարող են տեղեկանալ Բորսայի այն անդամից, որի միջոցով մասնակցել են պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին:

#### 2.4.4 **Տեղաբաշխումը**

2.4.4.1 Սույն փաստաթղթով առաջարկվող պարտատոմսերի տեղաբաշխման համար նախատեսված է երաշխավորված տեղաբաշխում: Երաշխավորված տեղաբաշխումն իրականացվում է Տեղաբաշխողի և Թողարկողի միջև 21/03/2014թ. կնքված Պարտատոմսերի երաշխավորված տեղաբաշխում իրականացնելու պայմանագրի դրույթների համաձայն: Նշված պայմանագրով մատուցվող ծառայությունների դիմաց Թողարկողը Տեղաբաշխողին վճարում է 1.500.000 (Մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումար:

2.4.4.2 Տեղաբաշխման աճուրդի ժամանակ չտեղաբաշխված պարտատոմսերը ձեռք է բերում Տեղաբաշխողը՝ 2.4.3.1. կետով սահմանված ուղղորդիչ նվազագույն գնով:

2.4.4.3 Տեղաբաշխման աճուրդի ընթացքում պարտատոմսեր ձեռք բերելու համար պոտենցիալ ներդրողները կարող են դիմել Բորսայի անդամ հանդիսացող կազմակերպություններին և մասնակցել աճուրդին՝ վերջիններիս կողմից սահմանված պայմաններով և սակագներով: Բորսայի անդամների ցանկը հասանելի է Բորսայի պաշտոնական ինտերնետային կայքում ([www.nasdaqomx.am](http://www.nasdaqomx.am)):

2.4.4.4 Արժեթղթերի հաշիվները բացվում և սպասարկվում են ՀԿԴ հաշվի օպերատորների միջնորդությամբ, վերջիններիս կողմից սահմանված պայմաններով և սակագներով: Հաշվի օպերատորների ցանկը հասանելի է ՀԿԴ պաշտոնական ինտերնետային կայքում ([www.nasdaqomx.am](http://www.nasdaqomx.am)):

### **2.5 Առևտրին թույլտվություն և առևտրի կազմակերպումը**

2.5.1 Սույն փաստաթղթում ներկայացված պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում Կազմակերպությունը դիմելու է Բորսա տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում առևտրին թույլատրելու համար: Բորսան կարող է չբավարարել Կազմակերպության հայտը:

2.5.2 Կազմակերպության մարված բոլոր պարտատոմսերը ազատ շրջանառվել են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ ազատ շուկայում: Կազմակերպության՝ 2013 թվականի հոկտեմբերին և դեկտեմբերին ինչպես նաև 2014 թվականի փետրվարին տեղաբաշխված ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի գեղջատկոսային պարտատոմսերը գտնվում են ազատ շրջանառության մեջ «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ ազատ շուկայում (նախատեսվում է, որ պարտատոմսերը կմնան ազատ շրջանառության մեջ «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ ազատ շուկայում մինչև իրենց մարման օրը՝ համապատասխանաբար 2014թ. հոկտեմբերի 22-ը, 2014թ. հունիսի 11-ը և 2015թ. հունվարի 29-ը):

**2.5.3** Երկրորդային շուկայում պարտատոմսերի իրացվելիությունն ապահովելու նպատակով Կազմակերպության և Տեղաբաշխողի միջև 21/03/2014թ-ին կնքվել է նաև «Նասդաք Օւմէքս Արմենիա» ԲԲԸ-ում պարտատոմսերի պարտադիր գնանշումներ կազմակերպելու մասին պայմանագիր, որի համաձայն Տեղաբաշխողը Պարտատոմսերի առևտրին թույլտվության ստացումից հետո «Նասդաք Օւմէքս Արմենիա» ԲԲԸ կանոններով սահմանված կարգով դիմելու է վերջինիս՝ Պարտատոմսերի շուկա ստեղծողի կարգավիճակի շնորհման համար:

### **Լրացուցիչ տեղեկություններ**

2.5.4 Պարտատոմսերի մասին տեղեկությունների մասում ներկայացված տեղեկությունների հետ կապված որևէ խորհրդատու ներգրավված չի եղել:

2.5.5 Պարտատոմսերի մասում ներկայացված տեղեկությունները Կազմակերպության արտաքին աուդիտ իրականացնող անձի կողմից աուդիտի չի ենթարկվել:

2.5.6 Պարտատոմսերի մասին տեղեկությունների մեջ երրորդ անձից ստացված տեղեկատվություն չկա:

2.5.7 Կազմակերպությանը և թողարկվող պարտատոմսերին վարկանիշ չի շնորհվել:

## **3 ԲԱԺԻՆ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

### **3.1 Անկախ աուդիտորները**

3.1.1 Կազմակերպության 2010, 2011 և 2012 թվականների անկախ աուդիտն իրականացրել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն: Վերջինս 2013թ. սեպտեմբերի 26-ին կայացած բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընտրվել է որպես Կազմակերպության 2013թ. գործունեության աուդիտն իրականացնող աուդիտորական կազմակերպություն: «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն հանդիսանում է «Գրանթ Թորնթոն Ինտերնեյշնալի» անդամ:

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի հասցեն է՝ ՀՀ ք. Երևան 0012, Վաղարշյան 8/1, հեռ. +374 10 26-09-54, ինտերնետային կայքի հասցեն է՝ [www.gta.am](http://www.gta.am): Կազմակերպության տնօրեն-բաժնետեր է հանդիսանում Գագիկ Գյուլբուդաղյանը:

3.1.2 Վերջին երեք տարիների ընթացքում Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի փոփոխություն և հեռացում չի եղել:

### **3.2 Ռիսկային գործոններ**

3.2.1 Ցանկացած տնտեսվարող սուբյեկտի, այդ թվում՝ Կազմակերպության պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ: Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ներքո շարադրած ռիսկերի ամփոփ նկարագրությունը և սույն փաստաթղթում տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը: Ներդրողը պետք է գիտակցի, որ նկարագրված ռիսկերը ոչ բոլոր ռիսկերն են, որոնք Կազմակերպությունը կարող է երբևէ կրել: Կազմակերպությունը բացահայտել է միայն այն ռիսկերը, որոնք համարել է էական: Ենթադրաբար կարող են լինել լրացուցիչ ռիսկեր, որոնք Կազմակերպությունն այժմ չի համարում էական, կամ որոնք ներկայումս հայտնի չեն նրան, և ցանկացած այդպիսի ռիսկ կարող է հանգեցնել ներդրողի կողմից ներդրված գումարի մասնակի կամ ամբողջական կորստին:

3.2.2 Կազմակերպության կողմից պարտատոմսերի տեղաբաշխմամբ ստանձնած պարտավորությունների մասնակի կամ ամբողջությամբ չկատարելը կարող է տեղի ունենալ միայն Կազմակերպության ֆինանսական վիճակի վատթարացման պարագայում, ինչն իր հերթին կարող է արդյունք լինել ինչպես ներքին, այնպես և



արտաքին ռիսկերի դրսևորման:

- 3.2.3 Ըստ էության Կազմակերպության ֆինանսական վիճակի վատթարացման ռիսկը կապված է հիմնականում Կազմակերպության հետ համագործակցող ԳՖՀ-ների ռիսկի հետ (counterparty risk), որի էությունը կայանում է նրանում, որ ԳՖՀ-ն չի կատարում Կազմակերպության նկատմամբ ստանձնած իր վարկային պարտավորությունները: Ներդրողը պետք է գիտակցի, որ Կազմակերպության գործընկերների կողմից ստանձնած պարտավորությունների հնարավոր չկատարման պատճառ կարող են հանդիսանալ բազմաթիվ ռիսկային գործոններ, որոնք անկառավարելի են Կազմակերպության համար:
- 3.2.4 Կազմակերպությունը ԳՖՀ-ի հետ կապված ռիսկերը կառավարում/զսպում է վարկային պորտֆելի դիվերսիֆիկացման և յուրաքանչյուր ԳՖՀ-ի համար առավելագույն սահմանաչափերի սահմանման միջոցով, ինչպես նաև յուրաքանչյուր ԳՖՀ-ի գծով եռամսյակային կտրվածքով իրականացնում է ֆինանսական գործունեության վերլուծություն՝ հնարավոր ռիսկերը վաղ շրջանում բացահայտելու ու համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար: Հաշվի առնելով, որ վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերը հանդիսանում են Կազմակերպության վարկերի ապահովությունը և կարող են վերոնշյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում անցնել իրեն՝ Կազմակերպությունը որակյալ պորտֆել ունենալու նպատակով այդ վարկերի նկատմամբ սահմանել է որակի նվազագույն ստանդարտներ և այլ չափանիշներ, որոնք հիմնված են միջազգային լավագույն փորձի վրա<sup>3</sup>:
- 3.2.5 Արտաքին ռիսկերին են դասվում նաև տնտեսությունում տեղի ունեցող զարգացումները: ՀՀ մակրոտնտեսական իրավիճակը և հիփոթեքային շուկայի փոփոխությունները կարող են բացասաբար ազդել Կազմակերպության վարկավորման ծավալների և հետևաբար ֆինանսական արդյունքների վրա: Այս առումով հարկ է նշել, որ համաշխարհային ճգնաժամի հետևանքով 2009թ.-ին ՀՀ-ում մոտ երկու անգամ նվազեցին հիփոթեքային վարկավորման ծավալները <sup>4</sup>: Աշխարհաքաղաքական և ներքաղաքական իրավիճակի անբարենպաստ փոփոխությունների արդյունքում ևս կարող են առաջ գալ այնպիսի բացասական գործոններ, որոնք կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ երկրի ընդհանուր տնտեսական վիճակի վրա, կարող են բերել տնտեսական ակտիվության և բնակչության եկամուտների նվազման, որն էլ բացասաբար կանդրադառնա ինչպես հիփոթեքային շուկայի, այնպես և Կազմակերպության վարկավորման ծավալների վրա:
- 3.2.6 Գիտակցելով վերը նշված ռիսկերը, այնուամենայնիվ, Կազմակերպությունը, մշտապես գնահատելով գործունեության միջավայրի փոփոխությունները և դրանցով պայմանավորված մարտահրավերները, պատրաստ է իրականացնել այնընտրանքային ռազմավարություններ՝ նպատակ ունենալով նվազագույնի հասցնել իր գործունեության վրա դրանց բացասական ազդեցությունը:
- 3.2.7 Ներքին ռիսկերից, որոնք առավել էական են Կազմակերպության համար, Կազմակերպությունը կարևորում է գործառնական ռիսկը: Գործառնական ռիսկերը բավական տարաբնույթ են և կարող են պայմանավորված լինել ինչպես տեխնիկական միջոցների խափանմամբ, այնպես և մարդկային գործոններով: Տեխնիկական միջոցների խափանման հետ կապված ռիսկերից Կազմակերպության համար առավել

<sup>3</sup> Բացի այդ եթե վերաֆինանսավորված հիփոթեքային վարկը 90 օրից ավել ժամկետանց է, ապա այն ենթակա է ամբողջությամբ հետ վճարման ԳՖՀ-ի կողմից:

<sup>4</sup> Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ տեղեկատվություն:

մեծ նշանակություն ունեն տվյալների բազայի ամբողջական պահպանմանը վտանգող ռիսկերը: Այս առումով Կազմակերպությունը իրականացնում է տվյալների բազայի պարբերաբար արխիվացում, որոնց կրկնօրինակները պահվում են ինչպես Կազմակերպության սերվերի և համակարգիչների մեջ, այնպես և արտաքին կրիչների վրա: Ընդ որում, արտաքին կրիչները պահվում են ինչպես Կազմակերպության տարածքում՝ չիրկիզվող պահարանում, այնպես և Կազմակերպության տարածքից դուրս: Մարդկային գործոններով պայմանավորված ռիսկերը նվազեցնելու նպատակով Կազմակերպությունում ներդրված է ներքին հսկողության համակարգ, ինչի տար են հանդիսանում գործարքների կրկնակի ստուգումը և առնվազն երկու անձի կողմից հաստատումը, Կազմակերպության վերստուգողի և արտաքին աուդիտորի կողմից պարբերաբար իրականացվող ստուգումները և այլն:

3.2.8 Մեկ այլ ռիսկ, կապված Կազմակերպության հետ, որը պետք է հաշվի առնեն ներդրողները նախքան ներդրում կատարելու վերաբերյալ որոշում ընդունելը, դա իրացվելիության ռիսկն է՝ ռիսկ, որ Կազմակերպությունը չի ունենա բավարար իրացվելիություն սահմանված ժամկետներում ստանձնած պարտավորությունների դիմաց վճարում կատարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարումը իրականացվում է համաձայն Կազմակերպության ներքին կարգերի և ընթացակարգերի, Ակտիվների և պասիվների կառավարման կոմիտեի միջոցով:

3.2.9 Վերջին շրջանում Կազմակերպության հետ տեղի չեն ունեցել այնպիսի դեպքեր, որոնք ներդրողը կկարևորեր Կազմակերպության իրացվելիության մասին պատկերացում կազմելու տեսանկյունից: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ Կազմակերպությունը կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում՝ հաշվի առնելով ինչպես ընդհանուր շուկայի, այնպես էլ Կազմակերպության համար առանձնահատուկ գործոնները: Իրացվելիության ռիսկի կառավարման նպատակով Կազմակերպությունը իր միջոցների մի մասը ներդնում է բարձր իրացվելի ակտիվներում, ինչպես նաև հնարավորինս համապատասխանեցնում է ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետները և ծավալները:

3.2.10 Կազմակերպության ներգրավված և տեղաբաշխված միջոցների ժամկետային կառուցվածքը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

	Մարմանը մնացել է										
	Ցպահանջ	Մինչև 30 օր	31-60 օր	61-90 օր	91-120 օր	121-150 օր	151-180 օր	181-1 տարի	1-3 տարի	3 տարուց ավելի	Ընդամենը
Տեղաբաշխված միջոցներ	1,419,942	4,642,765	103,460	148,610	126,324	114,859	157,183	873,633	4,844,579	17,210,262	29,641,617
Ներգրավված միջոցներ	0	850,861	0	0	0	0	1,545,500	1,991,516	4,541,143	10,156,970	19,085,990
<b>GAP</b>	<b>1,419,942</b>	<b>3,791,904</b>	<b>103,460</b>	<b>148,610</b>	<b>126,324</b>	<b>114,859</b>	<b>-1,388,317</b>	<b>-1,117,883</b>	<b>303,436</b>	<b>7,053,292</b>	<b>10,555,627</b>

### 3.3 Տեղեկատվություն Կազմակերպության մասին Կազմակերպության պատմությունը և զարգացումը.

3.3.1 Կազմակերպությունը հիմնադրվել է ՀՀ-ում, Կազմակերպության միակ հիմնադիր՝ ՀՀ

ԿԲ (հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 6) կողմից, ՀՀ ԿԲ նախագահի 2009թ. հունիսի 3-ի թիվ 1/705Ա որոշմամբ և գրանցվել և լիցենզավորվել է ՀՀ ԿԲ խորհրդի 2009 թվականի հունիսի 16-ի թիվ 182Ա որոշմամբ (վարկային գործունեության լիցենզիա թիվ 26, գրանցման համար թիվ 26):

- 3.3.2 Կազմակերպության պետական գրանցման և գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության փողոց 22 շենք, 7/1 տարածք: Կապի միջոցներն են՝  
հեռ. 56-07-41,  
ֆաքս 56-07-41,  
էլ փոստ [info@nmc.am](mailto:info@nmc.am),  
ինտերնետային կայք՝ [www.nmc.am](http://www.nmc.am):
- 3.3.3 Կազմակերպությունը փաստացի գործունեությունն սկսել է իրականացնել հիմնադրման պահից՝ 2009թ. հունիսից, երբ համաշխարհային ֆինանսական ճգնաժամը ՀՀ-ում հասավ իր կիզակետին և գրեթե բոլոր բանկերն և վարկային կազմակերպությունները դադարեցրել էին հիփոթեքային վարկավորումը, կամ էապես խստացրել էին վարկավորման պայմանները՝ դրանով իսկ նվազեցնելով վարկերի հասանելիությունը հասարակության լայն շերտերին:
- 3.3.4 Կազմակերպության ստեղծումը երկու հիմնական նպատակ էր հետապնդում՝ կարճաժամկետ հատվածում ակտիվացնել ՀՀ հիփոթեքային շուկան, երկարաժամկետ հատվածում զարգացնել ՀՀ հիփոթեքային վարկավորման շուկան՝ բնակարանային վարկերի ֆինանսավորման արդյունավետ ենթակառուցվածքի ստեղծման միջոցով:
- 3.3.5 Կազմակերպությունը, գործունեությունը սկսելուց ի վեր իր բնույթով հանդիսանում է ՀՀ հիփոթեքային շուկայում վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն: Մասնավորապես, Կազմակերպությունը, որպես իրացվելության երկրորդային շուկայի օպերատոր, ֆիզիկական անձանց չի տրամադրում հիփոթեքային վարկեր, այլ համագործակցում է ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների հետ (այսուհետ՝ Գործընկեր ֆինանսական հաստատություն կամ ԳՖՀ)՝ վերաֆինանսավորելով վերջիններիս կողմից տրամադրված այն հիփոթեքային վարկերը, որոնք համապատասխանում են Կազմակերպության կողմից սահմանված չափանիշներին և պահանջներին: Ներկայումս Կազմակերպությունը համագործակցում է 20 ԳՖՀ՝ 15 առևտրային բանկերի և 5 վարկային կազմակերպությունների հետ (Կազմակերպության հետ համագործակցող ԳՖՀ-ների ցանկը ներկայացված է սույն փաստաթղթի 3.4 Բիզնեսի նկարագիրը բաժնում): Կազմակերպության հիմնական նպատակն է մատչելի պայմաններով երկարաժամկետ միջոցներ տրամադրելով ԳՖՀ-ներին՝ ՀՀ հիփոթեքային շուկայում ստեղծել այնպիսի պայմաններ, որ հիփոթեքային վարկերը հասանելի/մատչելի դառնան այն ընտանիքների համար, որոնք ունեն միջին եկամուտներ և բնակարանային պայմանների բարելավման անհրաժեշտություն:
- 3.3.6 Ի սկզբանե լինելով վերաֆինանսավորող կազմակերպություն՝ Ընկերությունը ստեղծվել է որպես ունիվերսալ վարկային կազմակերպություն, քանի որ ստեղծման պահին (2009թ. հունիս) ՀՀ ԿԲ կողմից հաստատված «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների հիմնական տնտեսական նորմատիվները» Կանոնակարգ 14-ով սահմանված վարկային կազմակերպությունների տիպերի (խմբերի) մեջ չկար «Վերաֆինանսավորող վարկային կազմակերպություն» տեսակը և Կազմակերպության գործունեության համար առավել համապատասխան խումբը հանդիսանում էր «Ունիվերսալ Վարկային Կազմակերպությունը»: 2011 թվականի օգոստոսի 30-ի ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 225-Ն

որոշմամբ «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների հիմնական տնտեսական նորմատիվները» Կանոնակարգ 14-ում կատարված փոփոխությունների արդյունքում ավելացել է վարկային կազմակերպությունների նոր տիպ, այն է՝ վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություններ /ՎՎԿ/: Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո (2011 թվականի հոկտեմբերի 1), Կազմակերպությունը սահմանված կարգով փոխել է տիպը և ներկայումս հանդիսանում է վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն:

3.3.7 Կազմակերպությունը մասնաճյուղեր և ներկայացուցչություններ չունի:

3.3.8 Իր գործունեության սկզբից ի վեր Կազմակերպությունը իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներ չի կատարել և մոտ ապագայում չի նախատեսում իրականացնել:

### **3.4 Բիզնեսի նկարագիրը Հիմնական գործունեություն**

3.4.1 Կազմակերպությունը ներկայումս համագործակցում է 20 գործընկեր ֆինանսական հաստատությունների հետ և վերաֆինանսավորում է վերջիններիս կողմից տրամադրվող հիփոթեքային վարկերի հետևյալ տեսակները՝

- պատրաստի բնակելի անշարժ գույքի ձեռքբերման վարկեր,
- բազմաբնակարան բնակելի շենքում կառուցման փուլում գտնվող բնակարանի ձեռքբերման վարկեր,
- բնակելի անշարժ գույքի վերանորոգման վարկեր,
- բնակելի անշարժ գույքի կառուցապատման վարկեր,

3.4.2 Կազմակերպության գործընկեր հաստատությունների ցանկը ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

*Աղյուսակ 1.*


N	ԳՖՀ-ի անվանումը
1	«Անելիքբանկ» ՓԲԸ
2	«Առաջին հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ
3	«Առեքսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ
4	«Արարատբանկ» ԲԲԸ
5	«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ
6	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
7	«Արցախբանկ» ՓԲԸ
8	«Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ
9	«Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ
10	«Զարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ
11	«Էյջ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
12	«Էքսպրես Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ
13	«Ինելոբանկ» ՓԲԸ
14	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
15	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
16	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
17	«Յունիբանկ» ՓԲԸ
18	«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
19	«Ջի-Էնդ-Էյ» ՈՒՎԿ ՓԲԸ
20	«Կիլիկիա» ՈՒՎԿ ՍՊԸ

3.4.3 Վերաֆինանսավորվող հիփոթեքային վարկերի բարձր որակը ապահովելու, ինչպես

նաև նպատակ ունենալով ստանդարտացնել հիփոթեքային վարկավորման գործընթացը, Կազմակերպությունը սահմանել է Հիփոթեքային վարկերի որակի նվազագույն ստանդարտներ (այսուհետ՝ նաև ՈՆՍ), որոնց պետք է բավարարեն վերաֆինանսավորման ներկայացվող բոլոր վարկերը: ՈՆՍ սահմանված չափանիշները վերաբերում են ինչպես հնարավոր վարկառուի վարկունակության գնահատմանը, այնպես և անհրաժեշտ փաստաթղթերին և հիփոթեքային վարկավորման մնացած ասպեկտներին:


3.4.4 Ստորև ներկայացված է Կազմակերպության կողմից վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերի դինամիկան 2009թ. հուլիսից սկսած:

Գծապատկեր 1



3.4.5 Ինչպես երևում է գծապատկեր 1-ից՝ Կազմակերպությունը մինչև 2013թ. դեկտեմբերի ավարտը վերաֆինանսավորել է 4,224 հիփոթեքային վարկ՝ 33.2 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր գումարով: Ընդհանուր վերաֆինանսավորված վարկերի մոտ 77.8%-ը հանդիսանում են ձեռքբերման նպատակով տրամադրված հիփոթեքային վարկեր, 20.3%-ը՝ վերանորոգման, իսկ մնացածը՝ կառուցապատման և վերաֆինանսավորման վարկեր: Կազմակերպության միջոցներով վերաֆինանսավորված վարկերի ծավալում 31.12.13թ. դրությամբ մարզերում տրամադրված վարկերին բաժին է ընկել մոտ 24% (7,9 մլրդ ՀՀ դրամ): Քանակային արտահայտությամբ մարզերում տրամադրվել է 1,541 վարկ, կամ ընդհանուր քանակի մոտ 36%-ը:

Գծապատկեր 2



- 3.4.6 Կազմակերպության վերաֆինանսավորած վարկերի տվյալներով առավել ակտիվ են երևանին հարակից մարզերը (Արարատ, Արմավիր, Կոտայք) և Շիրակի մարզը:
- 3.4.7 Չնայած հիփոթեքային վարկերի ռիսկը կրում են ԳՖՀ-ները, Կազմակերպությունը ընթացիկ հսկողություն է իրականացնում իր կողմից վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերի նկատմամբ: Կազմակերպության կողմից վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերի մեջ 31.12.2013թ. դրությամբ ժամկետանց վարկերի տեսակարար կշիռը կազմել է մոտ 0.5%: Ընդ որում, համաձայն Կազմակերպության և ԳՖՀ-ների միջև կնքած համագործակցության պայմանագրի, ԳՖՀ-ն պարտավոր է հետ վճարել 90 օրից ավել ժամկետանց վարկերի գումարը Կազմակերպությանը:
- 3.4.8 Կազմակերպությունը իր գործունեությունը ֆինանսավորելու համար օգտագործում է ինչպես սեփական, այնպես էլ փոխառու միջոցներ: Մասնավորապես, բացի պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված միջոցներից Կազմակերպությունը ունի մոտ 3.5 մլրդ ՀՀ դրամ գումարով վարկ ՀՀ կառավարությունից, ինչպես նաև Կազմակերպության միջոցով է իրականացվում նաև Գերմանական KFW Entwicklungsbank բանկի կողմից ֆինանսավորվող «Հայաստանում բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացում» վարկային ծրագիրը: 31.12.2013թ. դրությամբ Կազմակերպությունը ամբողջությամբ օգտագործել է Ծրագրի երրորդ փուլի միջոցները (20 մլն Եվրոյին համարժեք ՀՀ դրամ): Համաձայն ՀՀ ԿԲ և Կազմակերպության միջև 2013թ. հունիսին կնքած պայմանագրի Կազմակերպությանը տրամադրվել են նաև «Հայաստանում բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացում» ծրագրի առաջին և երկրորդ փուլերի միջոցները: Ընդհանուր առմամբ, 31.12.2013թ. դրությամբ Կազմակերպությունը KFW Entwicklungsbank միջոցների հաշվին վերաֆինանսավորել է 2,180 հիփոթեքային վարկ՝ 16.2 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով: Կազմակերպության պարտատոմսերի տեղաբաշխումից ստացվող միջոցները նույնպես ուղղվելու են հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորմանը:
- 3.4.9 Կազմակերպությունը մշտապես կատարելագործում է իր գործունեությունը՝ համապատասխանեցնելով շուկայի պահանջներին, և աշխատանքներ է տանում առաջարկվող պրոդուկտների տեսականին ընդլայնելու ուղղությամբ: Մասնավորապես, 2013թ. դեկտեմբերին Կազմակերպությունը 13.7 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր է կնքել Ֆրանսիական Զարգացման Գործակալության հետ բնակարանային միկրո էներգարդյունավետության վերանորոգման վարկավորումը ֆինանսավորելու նպատակով:


### ***Հիմնական շուկաները***

- 3.4.10 Հանդիսանալով հիփոթեքային վարկերը վերաֆինանսավորող հաստատություն, Կազմակերպության գործունեությունը մեծապես կապված է ՀՀ հիփոթեքային շուկայում տիրող իրավիճակից և հետագա զարգացումներից: Այդ իսկ պատճառով, ՀՀ հիփոթեքային շուկան մշտապես ուսումնասիրվում է Կազմակերպության կողմից: Ընդհանուր առմամբ, ՀՀ-ում հիփոթեքային վարկավորման շուկան սկիզբ է առել 2005թ.-ից և պայմանականորեն բաժանվում է 3 փուլի՝
- Հիփոթեքային շուկայի զարգացումը 2005թ.-ից մինչև 2008թ. վերջ: Այս ժամանակահատվածում հիփոթեքային վարկավորումը կտրուկ ակտիվացավ՝ աճելով մոտ 7.6 անգամ,

- Հիփոթեքային շուկան համաշխարհային ճգնաժամի ժամանակ /2008թ.-ի վերջից մինչև 2010թ. սկիզբ/: Այս ժամանակահատվածում վարկատու կազմակերպությունները կտրուկ նվազեցրել են վարկավորման ծավալները, ինչպես նաև խստացրել են վարկավորման պայմանները: Արդյունքում, 2009թ.վերջի դրությամբ հիփոթեքային վարկերի ընդհանուր ծավալները մնացել են գրեթե նույն մակարդակի վրա՝ համեմատ 2008թ. վերջի հետ:., և
- Հիփոթեքային շուկայի զարգացումը հետճգնաժամային հատվածում՝ 2010թ.-ից սկսած: 2010թ.-ից սկսած ՀՀ ընդհանուր տնտեսության վերականգնմանը զուգընթաց զարգացման դրական միտումներ դրսևորվեցին նաև հիփոթեքային շուկայում:

Ստորև ներկայացված է ՀՀ հիփոթեքային շուկայի դինամիկան սկսած 2008-ից:

Գծապատկեր 3



Ինչպես երևում է գծապատկերից, սկսած 2010 թվականի վերջից, ՀՀ հիփոթեքային շուկան ցուցաբերում է կայուն աճի միտումներ: Այսպես, 2011 թվականի սկզբից մինչև 2013 թվականի հոկտեմբեր ամիսը ընդհանուր առմամբ տրամադրվել է մոտ 15,000 հիփոթեքային վարկ ավելի քան 170 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով<sup>5</sup>: Արդյունքում, հիփոթեքային վարկերի պորտֆելը դիտարկվող ժամանակահատվածում աճել է մոտ 65%-ով: 30.11.2013թ. դրությամբ ընդհանուր հիփոթեքային վարկերի պորտֆելը կազմել է 161 մլրդ ՀՀ դրամ, աճելով տարվա սկզբից 11%-ով:

Հաշվի առնելով հիփոթեքային վարկերի նկատմամբ մեծ պահանջարկի առկայությունը (ըստ գնահատականների՝ ՀՀ-ում հիփոթեքային վարկավորման նկատմամբ վճարունակ պահանջարկը 2009թ. վերջի դրությամբ կազմել է մոտ 1.4 մլրդ ԱՄՆ

<sup>5</sup> Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ տեղեկատվություն:

դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ 55,000 հատ հիփոթեքային վարկ) ակնկալվում է, որ առաջիկայում տնտեսության շարունակական կայունացման հետ մեկտեղ կշարունակվի հիփոթեքային շուկայի աշխուժացումը: Այդ մասին է վկայում նաև ՀՀ առևտրային բանկերի կանխատեսումները՝ համաձայն առևտրային բանկերի 2012-2014թթ. հեռանկարային զարգացման ծրագրերի ամփոփ տվյալների հիփոթեքային վարկերի ծավալի զուտ աճը /նոր տրամադրումներից հանած վարկերի մայր գումարների մարումները/ առաջիկա 2 տարիների ընթացքում կազմելու է տարեկան մոտ 30 մլրդ ՀՀ դրամ<sup>6</sup>:

### **Կազմակերպության դերը**

Չնայած գործունեության կարճ ժամանակահատվածի, Կազմակերպությունը իր ուրույն դերն ունի ՀՀ հիփոթեքային վարկավորման շուկայում, մեծապես նպաստելով վերջինիս կայացմանը և հետագա զարգացմանը: Այսպես, 31.12.2013թ. դրությամբ Կազմակերպության վերաֆինանսավորած վարկերի մասնաբաժինը ՀՀ հիփոթեքային վարկերի ընդհանուր պորտֆելում կազմել է 14.5%, իսկ դրամային վարկերի մեջ՝ 31.4%: Ստորև բերված Աղյուսակ 1-ում ներկայացված են Կազմակերպության պորտֆելի ծավալը և մասնաբաժինը ՀՀ հիփոթեքային վարկերի ընդհանուր պորտֆելում 2009-2013թթ.:

### **Աղյուսակ 2. Կազմակերպության վարկային պորտֆելի ծավալները և մասնաբաժինը ՀՀ հիփոթեքային շուկայում /մլրդ ՀՀ դրամ/**

Արժույթը	31/12/10			31/12/11			31/12/12			31/12/13		
	ՀՀ հիփոթ. պորտֆել	ԱՀԸ բաժին		ՀՀ հիփոթ. Պորտֆել	ԱՀԸ բաժին		ՀՀ հիփոթ. պորտֆել	ԱՀԸ բաժին		ՀՀ հիփոթ. Պորտֆել	ԱՀԸ բաժին	
ՀՀ դրամով	57.1	8.9	15.6%	66.3	14.2	21.4%	70.9	19.0	26.8%	75.4	23.7	31.4%
ԱՄՆ դոլարով	40.5			56.2			73.9			87.7		
<b>Ընդամենը</b>	<b>97.6</b>		<b>9.1%</b>	<b>122.5</b>		<b>11.6%</b>	<b>144.8</b>		<b>13.1%</b>	<b>163.1</b>		<b>14.5%</b>

Հիփոթեքային շուկայի զարգացման վերոնշյալ կանխատեսումները հիմք են տալիս եզրակացնելու, որ Կազմակերպության վարկավորման ծավալները մոտ ապագայում նույնպես կաճեն: Նման եզրահանգման օգտին է վկայում նաև այն փաստը, որ Կազմակերպությունը ըստ էության հանդիսանում է ՀՀ հիփոթեքային շուկայում միակ վերաֆինանսավորում իրականացնող կազմակերպությունը<sup>7</sup>: Չնայած մրցակիցների բացակայությանը, Կազմակերպությունը բավականին ճկուն քաղաքականություն է վարում հիփոթեքային շուկայում՝ գործելով շուկայի պահանջներին համահունչ և արագ արձագանքելով դրանց զարգացման վերջին միտումներին:

<sup>6</sup> Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ կողմից հրապարկված ՀՀ բանկային համակարգի հնարավոր զարգացումները 2012-2014թթ նյութը

<sup>7</sup> Պետական նպատակային ծրագրերի շրջանակներում հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորում իրականացնում է նաև «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ն, որը սակայն չի դիտարկվում որպես Կազմակերպության մրցակից, հաշվի առնելով պետական ծրագրերի սոցիալական ուղղվածությունը և առանձնահատկությունները (պետական ծրագրերի շահառուները չեն ընդգրկվում Կազմակերպության թիրախային խմբի մեջ):



Այսպես, Ֆրանսայի Չարգացման Գործակալության հետ համատեղ ծրագրի իրականացվող շրջանակներում, Կազմակերպությունը 2014թ. երկրորդ եռամսյակից նախատեսում է սկսել բնակարանային միկրովարկավորման և էներգոարդյունավետության բարձրացման վարկավորման վերաֆինանսանսավորումը: Ծրագրի ընդհանուր ծավալը կկազմի 10 մլն Եվրոյին համարժեք ՀՀ դրամ: Ծրագրի ներքո Եվրամիության ֆինանսավորմամբ Կազմակերպության և ԳՖՀ-ներին կտրամադրվի տեխնիկական աջակցություն, իսկ վերջնական վարկառուները՝ ծրագրի պահանջները ապահովելու դեպքում կստանան դրամաշնորհ վարկի գումարի մինչև 10%-ի չափով: Ակնկալվում է, որ առաջիկա երեք տարիների ընթացքում ծրագրի ներքո կտրամադրվի մոտ երեք հազար վարկ:


Բացի ֆինանսական միջոցների ուղղակի տրամադրումից, Կազմակերպությունը իր գործընկեր ֆինանսական հաստատություններին տրամադրում է խորհրդատվություն ինչպես ընդհանուր հիփոթեքային վարկավորման, այնպես և Կազմակերպության կողմից սահմանված պահանջների և Կազմակերպության կողմից ներդրվող նոր վարկատեսակների վերաբերյալ: Ֆինանսաբանկային քուլեջ հիմնադրամի հետ համատեղ, Կազմակերպությունը առնվազն տարին մեկ անգամ կազմակերպում է «Բնակարանային ֆինանսավորում վարկային մասնագետների համար» դասընթացը:

Կազմակերպությունը մեծ կարևորություն է տալիս նաև բարձր որակավորում ունեցող աշխատակազմին: Հմտությունների և մասնագիտական ունակությունների զարգացման նպատակով՝ Կազմակերպության աշխատակիցները պարբերաբար մասնակցում են վերապատրաստման դասընթացների և սեմինարների ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ՀՀ տարածքից դուրս, ինչը կադրային քաղաքականության տեսանկյունից կարելի է դիտարկել որպես Կազմակերպության մրցակցային առավելություն մի շարք այլ կազմակերպությունների նկատմամբ: Վերապատրաստումների արդյունքում Կազմակերպությունում ներմուծվում է նաև լավագույն միջազգային փորձը:

### 3.5 Կազմակերպության կառուցվածքը

Կազմակերպությունը որևէ խմբի անդամ չէ: Ստորև ներկայացվում է Կազմակերպության ներքին վարչակազմակերպչական կառուցվածքը:

Գծապատկեր 4



### 3.6 Կազմակերպության հիմնական միջոցները


3.6.1 Կազմակերպությունն իր բնականոն գործունեության ապահովման նպատակով ձեռք է բերել հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ, որոնց արժեքի հանրագումարը չի գերազանցում Կազմակերպության ընդհանուր ակտիվների հաշվեկշռային արժեքի 10%-ը: 31.12.2013թ. դրությամբ Կազմակերպության հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը կազմել է 13.2 մլն ՀՀ դրամ, իսկ ոչ նյութական ակտիվներինը՝ 22.8 մլն ՀՀ դրամ: Կազմակերպությունը փաստացի գործունեությունը ծավալում է ՀՀ, ք. Երևան, Հանրապետության 22-7/1 հասցեում գտնվող գրասենյակային տարածքում, որը վերցված է գործառնական վարձակալությամբ:

3.6.2 Կազմակերպության կողմից իր հիմնական միջոցների օգտագործումը սահմանափակող հանգամանքներ չկան:

### 3.7 Կազմակերպության զարգացման վերջին միտումները

3.7.1 Կազմակերպության վարկավորման ծավալները ըստ եռամսյանկների /01.01.2010-31.12.2013թթ./ ներկայացված են ստորև բերված գծապատկեր 5-ում:

Գծապատկեր 5



Նշված ժամանակահատվածում ամսական ծավալներում նկատվող տատանումները արտահայտում են ընդհանուր վարկավորման միտումները և հիմնականում պայմանավորված են սեզոնայնության գործոնով: Կազմակերպության գործունեության ցուցանիշների վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում կազմելու համար պոտենցիալ ներդրողները կարող են ծանոթանալ Կազմակերպության տարեկան և եռամսյակային հաշվետվություններին, որոնք տեղադրված են Կազմակերպության պաշտոնական կայքի «Հաշվետվություններ» մասում:

### 3.8 Կազմակերպության շահույթի կանխատեսումը

- 3.8.1 Այս ենթաբաժնում ներկայացված են 2014-2016թթ. Կազմակերպության շահույթի կանխատեսումները, որոնք հիմնված են հետևյալ ենթադրությունների վրա.
- Կազմակերպության հիմնական գործունեությունը շարունակելու է լինել հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորումը,
  - Կազմակերպության միջին ամսական վերաֆինանսավորման ծավալը կազմելու է. 2014թ.' մոտ 982 մլն ՀՀ դրամ, 2015թ.' 994 մլն ՀՀ դրամ և 2016թ.' 1,016 մլն ՀՀ դրամ,
  - Կազմակերպության վարկավորման տոկոսադրույքը կազմելու է 8.75% տարեկան,
  - Վերաֆինանսավորման նպատակով Կազմակերպությունն օգտագործելու է ինչպես սեփական, այնպես էլ փոխառու միջոցներ՝ մասնավորապես ներգրավված վարկային միջոցներ և թողարկված պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված միջոցներ,
  - Կազմակերպության՝ ՀՀ կառավարությունից ներգրավված միջոցների տոկոսադրույքը մնում է անփոփոխ՝ 7%, իսկ ՀՀ ԿԲ-ից (KfW Entwicklungsbank բանկի միջոցներ) 7.75-ից 8.35% տարեկան,
  - Կազմակերպությունը 2013թ. դեկտեմբերի 17-ին 13.7 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր է կնքել Ֆրանսիական Զարգացման Գործակալության հետ բնակարանային միկրո էներգոարդյունավետության վարկավորումը ֆինանսավորելու նպատակով: Ծրագրի շրջանակներում Կազմակերպությունը 2014թ. երկրորդ եռամսյակից նախատեսում է սկսել բնակարանային միկրովարկավորման վերաֆինանսավորումը: Ֆրանսիական զարգացման գործակալությունից ներգրավված վարկի պայմաններն են՝ տարեկան տոկոսադրույքը՝ 8.35%, մարման ժամկետը՝ 12 տարի, վարկի գումարի մարման 3 տարի արտոնյալ ժամկետով, տոկոսների և վարկի գումարի մարումները կիրականացվեն յուրաքանչյուր հունիս և դեկտեմբեր ամիսներին,
  - Կազմակերպությունը տեղաբաշխելու է իր ժամանակավորապես ազատ դրամական միջոցների մի մասը (մեկ միլիարդ ՀՀ դրամից ավել) ՀՀ պետական կարճաժամկետ պարտատոմսերում և/կամ ՀՀ առևտրային բանկերում՝ որպես ավանդ,
  - Կազմակերպության կանոնադրական կապիտալը կանխատեսվող ժամանակահատվածում կաճի 2 մլրդ ՀՀ դրամով,
  - Վաղաժամկետ մարումները կկազմեն 0.1%,
  - Կազմակերպության բյուջեն 2014թ. համար ընդունված է փաստացի հաստատվածը, իսկ 2015թ. և 2016թ. համար կանխատեսվել է համապատասխանաբար 15% և 26.5% աճ,
